



ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Հարիւրամեակը Առանց Նախկին Ռեժիմին

Հայկական ցեղասպանութեան հարիւրամեակէն առաջ ժիւղայր Սեֆիլեան եւ իր համախոհները «հարիւրամեակը առանց ռեժիմի» կարգախօսով բողոքի գործողութիւններ ձեռնարկեցին Հայաստանի տարածքին: Այդ շարժումը չկարողացաւ մեծ թափ հաւաքել ու աւարտեցաւ, 2015-ի Ապրիլին Սեֆիլեանի ձերբակալութեամբ ու բանտարկութեամբ:

Այն ինչ որ չյաջողեցաւ Սեֆիլեանին Նիկոլ Փաշինեան կարողացաւ իրականացնել՝ համաժողովրդային յեղափոխութեան միջոցաւ ու Մայիսեան հերոսամարտերուն եւ Հայաստանի առաջին հանրապետութեան 100-ամեակը նշուեցաւ առանց նախկին ռեժիմի մասնակցութեան: Սակայն, մեկնող ռեժիմը տակաւին չընդունիր իր պարտութիւնը եւ յամառօրէն կը պնդէ, որ իրենք իշխանութիւն են խորհրդարանէն մերս եւ ընդդիմութիւն անկէ դուրս: Այս տրամադրութեամբ ալ անոնք կը բողոքեն, որ 100-ամեակի տօնակատարութիւններուն խորհրդարանի ղեկավարութիւնը պատշաճ ձեւով չէ հրաւիրուած ու անտեսուած է Ազգային ժողովի նախագահի մասնակցութիւնը պաշտօնական արարողութիւններուն՝ վարչապետի, Հայաստանի եւ Արցախի նախագահներուն եւ Ամեւայն Հայոց Կաթողիկոսի կողմէն:

Պետական պաշտօնեաներուն յատկացուած տեղերը կրճատելով, անոնց փոխարէն հրաւիրուած էին Մարտի մէկի զոհերու հարազատները, քառօրեայ պատերազմի նահատակներու ծնողները եւ Արցախեան հերոսամարտի հաշմանդամ զինուորները, այսպիսով արժանի յարգանք մատուցելով անոնց, որոնք շատ աւելին տուած են իրենց հայրենիքին, քան նախկին իշխանութեան ներկայացուցիչները:

Հանրապետականները չեն ուզեր հաշտուիլ Հայաստանի այսօրուայ նոր իրողութեան հետ, ուր իրենց համար տեղ չկայ այլեւս: Խորհրդարանը, Երեւանի քաղաքապետարանը, դատախազութիւնը տակաւին իրենք ձեռքերուն մէջ պահելով, անոնք վերադարձի յոյսեր կը փայփայեն: Յեղափոխութեան խաղաղ բնոյթը ու վրէժխնդրութեան բացակայութիւնը սխալ կ'ընկալուին անոնց կողմէ: Հայաստանի յաղթանակած ժողովուրդը պատրաստ չէ համակերպելու եւ կամ հանդուրժելու զուգահեռ վարչակարգի մը գոյութիւնը՝ իր կողմէ ձեւաւորուած իշխանութեան կողմին:

Վստահ ենք, որ նոր իշխանութիւնները պիտի առնեն անհրաժեշտ քայլերը, որպէսզի երկիրը ամբողջութեամբ ձերբազատուի հանրապետականներէն ու հարիւրամեակի տարին իր լրումին հասնի իսկապէս առանց նախկին ռեժիմին:

«ՄԱՍԻՍ»

Հայաստանի Մէջ Նշուեցաւ Մայիսեան Հերոսամարտերուն Եւ Առաջին Հանրապետութեան 100-Ամեակը

Երկուշաբթի, Մայիս 28-ին նշուեցան Մայիսեան Հերոսամարտերուն եւ Հայաստանի առաջին Հանրապետութեան 100-ամեակները:

Առաւօտեան Սարդարապատի Յուշահամալիրէն ներս տեղի ունեցած յատուկ արարողութեան ընթացքին վարչապետ Նիկոլ Փաշինեան, Նախագահ Արմէն Սարգսեան, Արցախի Հանրապետութեան Նախագահ Բակօ Սահակեան եւ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ծաղկեպսակներ զետեղեցին Սարդարապատի ճակատամարտի հերոսներու յիշատակը յաւերժացնող յուշակոթողին մօտ, յարգանքի տուրք մատուցելով անոնց յիշատակին:

Պատուոյ նուագախմբի հանդիսաւոր քայլերթը ընդունելէ յետոյ, վարչապետ Նիկոլ Փաշինեան պաշտպանութեան նախարարի ընկերակցութեամբ կատարեց զինատեսակներու ստուգում: Յուշահամալիրէն ներս ցուցադրուած էին հայկական զինուած ուժերու ինչպէս արդիական, այնպէս ալ թանկարանային նմուշի զինատեսակները, որոնք մասնակցած էին Սարդարապատի հերոսամարտին:

Ապա, վարչապետը մօտենալով շքերթի վայրը եւ արտասանեց կուռ ճառ մը, անդրադառնալով օրուայ խորհուրդին եւ Հայաստանի ներկային ու ապագային:

«Մենք յաղթեցինք, որովհետեւ»

Վարչապետ Փաշինեանի Այցը Վրաստան

«Հայ-վրացական յարաբերութիւններուն մէջ չլուծուող խնդիրներ չկան», Թիֆլիսի մէջ յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեան, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլիի հետ առանձնազրոյցէն ետք:

«Մեր պատուիրակութիւնը եկած է Թիֆլիսի հաւաստելու մեր պատրաստակամութիւնը եղբայրութեան եւ բարեկամութեան միջնորդի մէջ քննարկել բոլոր հարցերը: Մենք համոզուած ենք, որ այս միջնորդը եւ տրամադրուածութիւնը կրնայ լրջագոյն զարգացումներ բերել մեր յարաբերութիւններուն մէջ եւ ես շատ ուրախ եմ արձանագրելու համար, որ Վրաստանի կառավարութիւնը եւ անձամբ վարչապետը նոյնպիսի տրամադրուածութիւն ունին մեր յարաբերութիւններու հետագայ զարգացման համար», - ըսած է Փաշինեան:

Հայաստանի վարչապետը այցելած է Թիֆլիսի Ս. Գէորգ եկեղեցին, ուր խանդավառ ընդունելութեան արժանացած է: «Այն յաղթանակը, որ ժողովուրդը արձանագրեց Երեւանի մէջ, նաեւ ձերն է», այս առթիւ ըսած է Փաշինեան:



Շքերթին մասնակցող Հայկական բանակի ստորաբաժանումներէն մէկը

տեւ մեր հուշիւնը անապատներ քշուիլը եւ կոտորուիլը չէ: Հայ ժողովուրդը 400 տարուան մէջ առաջին անգամ ըլլալով իր յոյսը դրաւ ինքն իր վրայ, ոչ թէ ուրիշին»: Ան դիտել տուաւ, որ այս տարի եւս հայ ժողովուրդը յաղթեց, որովհետեւ ինքն իր կարողութեան վրայ դրաւ իր յոյսը եւ հաւատաց իր ուժերուն:

«Այլեւս ոչ ոք կրնայ համարձակիլ կամք պարտադրել ժողովուրդին, ստորացնել զայն ընտրակաշառքի եւ այլ միջոցներով»,

հաստատեց Փաշինեան:

Խօսքի աւարտին վարչապետը ըսաւ. - «Առաջին Հանրապետութիւնն ընդամենը երկու տարուայ կեանք ունեցաւ, բայց Առաջին Հանրապետութեան հիմնադիր հայրերը անհեռանկար գործերով չէին զբաղուած, այլ հայոց նոր պետականութեան հիմքերն էին դնում: Միայն Առաջին Հանրապետութեան գոյութեան շնորհիւ էր, որ Հայաստանը Խորհրդային Միութեան կազմէն հանձնուեցաւ»:

Շար.ը էջ 5

Յունիս 6-ի Ընտրութիւններուն Առթիւ ՀԱԽ Հրապարակեց Իր Զօրակցութիւնը Վայելող Թեկնածուներու Անունները

ARMENIAN COUNCIL OF AMERICA
Political Action Committee Endorsements

ON TUESDAY, JUNE 5 VOTE FOR

CALIFORNIA GOVERNOR	Ed Hernandez Lieutenant Governor	Alex Padilla Secretary of State	Betty Yee State Controller	Fiona Ma State Treasurer	Ricardo Lara Insurance Commissioner
	Antonio Villaraigosa	Scott Swankin Board of Equalization	Xavier Becerra Attorney General	Tommy Thurnmond Superintendent of Public Instruction	Kevin de León
UNITED STATES SENATE					

ՄԳ-ԷԿ Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) հրապարակեց Յունիս 6-ի Քալիֆորնիոյ նախնական ընտրութիւններուն առթիւ իր զօրակցութիւնը վայելող թեկնածուներու անունները:

Այս առթիւ հրապարակուած յայտարարութեան մէջ ՀԱԽ կը յայտնէ որ, զօրակցութեան առթիւ ուսումնասիրուած են պաշտօնի

վրայ եղող թեկնածուներու անցեալի գործունէութիւնը, իսկ նոր թեկնածուներու պարագային որոշումը հիմնուած է անոնց ուղղուած շարք մը հարցումներուն տուած պատասխաններուն վրայ՝ Ամերիկահայութիւնը յուզող հարցերու շուրջ եւ պատրաստակամութեամբ:

Շար.ը էջ 5

ՇԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Դատարանի Որոշմամբ ՀՀ-ի Գործունեությունը Կարող է Դադարեցուել

ՈՌԲԵՐՏ ԱՆԱՆԵԱՆ

Հայաստանում Հանրապետական կուսակցության գործունեությունը արգելելու օրինական ճանապարհ կայ:

Մի շտապէք պնդել, թէ սա քաղաքական վեցարկաղի կը նմանուի եւ ՀՀ-ի գործունեությունը արգելմամբ Հայաստանը կը կորցնի ժողովրդավար պետություն դառնալու շանսը: Միտոյ եւ համերաշխությունը չեղափոխություն ասելով ամենեւին չի կարելի հասկանալ անպատժելիություն եւ ամենաթողություն: ՀՀ-ի արգելումը պէտք է տեղի ունենայ դատարանի օրինական վճռով եւ փաստերի բաւարար առկայութեամբ:

Հիմա տեսնենք: Յետ չեղափոխական Հայաստանում գրեթէ ամէն օր Ազգային անվտանգության ծառայությունը, ոստիկանությունը, իրաւապահ համակարգի այլ կառույցներ, նախարարությունները բացառապէս են ՀՀ ներկայ ու նախկին պաշտօնեաների թոյլ տուած կողակցիներն են: Առաջինը, անարդիւնաւէտ ծախսեր, ատկատներ: Յօդուածն աւելորդ մանրամասներով չծանրաբեռնենք եւ կոնկրետ օրինակները մէջ չբերենք: Ընդամենը բացէք մամուլը եւ հետեւեք հրապարակումներին:

Պետութեանը հասցուած վնասներն արդէն այս պահին միլիոնաւոր դրամներն են հասնում: Առաջիկայ օրերին, երբ ԱԱԾ-ի «350 հերոսները» պայմանական անունով գործողութեան արդիւնքները տեսանելի լինեն, փաստացի կը խօսենք պետութեանը հասցուած միլիարդաւոր դրամ վնասների մասին եւ կ'իմանանք անօրինակաւությունների հեղինակներին:

ԱԱԾ-ն/ոստիկանությունը պարտաւոր են հասարակության առաջ բացառապէս կոնկրետ պաշտօնեայի եւ անօրինական պիզնես գործունեությունների միջեւ առկայ կապը՝ ամբողջացնելով կողակցիներն կծիկը եւ նաեւ այն, թէ ովքեր են ստեղծել այդ մեխանիզմները եւ

կառավարել: Կասկած անգամ չկայ, որ այս ամէնը կարող էր տեղի ունենալ միայն ՀՀ իշխանութեան թոյլտուութեան պայմաններում: Բնականաբար, թիւ 1 պատասխանատուն Սերժ Սարգսեանն է:

Ինչպէս գիտենք, կալանաւորուել են ՀՀ պատգամաւոր Միհրան Պողոսեանի եւ ՀՀ նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարեանի իւրաքանչեւ անձինք, որոնք բռնաճշտումներն են ենթարկել խաղաղ հանրահասարակութեան մասնակիցներին: Թէ ում հրահանգով եւ ում դրոյմամբ են այդ մարդիկ գնացել յանցագործությունների, իհարկէ կը պարզեն քննչական մարմինները: Բայց կարծես թէ հարցի պատասխանը գուշակելու կարիք չկայ:

Իրաւապահ մարմիններին պէտք է որ դժուար չլինի հիմնաւորել, որ ՀՀ իշխանութեան մէջ գտնուողներն են ջարդարարների գումարտակները կազմել եւ ուղարկել «մարտի դաշտ»:

ԱԱԾ պեան այսօր ասել է, որ դեռ երկուսնից կողակցիներն սխեմաների մէջ կասկածուող/անուղղակի ներգրաւուած անձինք են բերման ենթարկուած: Առաջիկայ օրերին անուն առ անուն կը յայտարարուեն «շուտորի» եւ արտօսեալ պաշտօնեաների անունները: Նրանք կեղծիքի գործադրմամբ պիզնես են վարել եւ չեն կատարել հարկային պարտաւորությունները:

Պետական միջոցները մսխելու եւ անօրինական պիզնեսների տիրապետելու փաստեր կարելի է հաւաքել նաեւ՝ փորձելով ուսումնասիրել բարձրաստիճան պաշտօնատար անձանց ներկայացրած յայտարարագրերը: Օրինակ՝ Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարեանն ունի 250 միլիոն դրամ, 50 հազար եւրօ եւ գրեթէ նոյն չափի տոյլը գումար:

Իրաւապահներին պէտք է հետաքրքրի՝ ամբողջ կեանքում միայն պետական պաշտօններ զբաղեցրած Մարգարեանը ինչպէ՞ս է յաջողացրել այսքան հարստանալ: Բայց որպէս թոյլ օղակ միայն Տարոն Մար-

գարեանին չէ, որ արժի դիտարկել:

ՀՀ-ի յանցագործությունները շարքը կարելի է լրացնել ինչպէս ասենք Մարտի 1-ի գործը, 2016-ի Յուլիի 29-ին լրագրողների դէմ բռնությունները, այնպէս էլ ընտրական յանցագործությունները արդար քննելով: Պէտք է պարզուեն նաեւ, թէ քաղաքական ինչ որոշումների արդիւնքում են քաղաքատարկեալները յայտնուել բանտերում եւ անօրինական ազատագրուել, թէ ի՞նչ շահագրգռութիւն են ունեցել դատախազութիւնն ու քննչական մարմինները՝ կեղծ քրէական գործեր սարքելու եւ մարդկանց ճակատագրերը խեղելու համար:

Բոլոր այն անձինք, որոնք մաս են կազմել ՀՀ իշխանութեան, պէտք է անցնեն «մաքրագործող պրոցես-դուրալով»՝ ստուգուեն միջոցների օրինականութիւնը եւ կազմակերպուած յանցագործություններում ներգրաւուածութեան աստիճանը: Եթէ պետութեան առաջ կան արդար գտնուած ՀՀ-ականներ, իրաւապահները պէտք է նրանց հանդիստ թողնեն:

Իհարկէ, ՀՀ-ի գործունեությունների արգելումը կարող է բացասական երանգ ենթադրել՝ գուտգգայական մակարդակի վրայ, բայց դա չի նշանակում, որ խնդիր կ'ունենանք օրինականութեան հետ: Հայաստանի Հանրապետությունում օրինական գրանցում ունեցող ցանկացած կազմակերպություն, լինի դա հասարակական կամ քաղաքական, պարտաւոր է գործել օրինականութեան շրջանակներում, պահպանել ՀՀ Սահմանադրութիւնը եւ օրենքները: Իրաւապահ մարմինները դեռեւս ամբողջութեամբ չեն բացառապէս Հանրապետական կուսակցութեան մասնակցութեամբ կատարուած յանցագործությունների ողջ ծաւալը: Ապագայում ներկայացուելիքն էլ կը գումարուի այսօրուայ փաստերին եւ ՀՀ-ի գործած յանցագործությունների պատկերը կ'ամբողջանայ:

Իրաւապահները պարտաւոր են

հանրութեան բացատրել՝ ինչպէ՞ս է պատահել, որ Հայաստանի տնտեսութեան 40%-ը գտնուել է ստվերում: Ովքե՞ր են եղել արտօնալ գործարարները եւ քաղաքական ո՞ր ուժի թողտուութեամբ են այդ արտոնութիւններն ստացել: Ո՞ւր են գնացել քաղաքացիներից կորուած սեւ փողերը եւ ինչ նպատակով են ծախսուել:

Եթէ ՀՀ-ն չկանգնի արդար դատարանի առաջ եւ կատարուած յանցագործությունների համար պատասխան չտայ, դա կը նշանակի, որ Նոր Հայաստանը մենք կառուցում ենք խարխուլ հիմքերի վրայ, որտեղ պատասխանատուութեան ինստիտուտը չի գործում կամ գործում է թերի:

Ամփոփելով նշենք, որ կարող են հետաքրքրեալ բաւարար փաստեր ու ապացոյցներ հաւաքուել, ըստ որոնց՝ ՀՀ-ն պետական իշխանութիւնը օգտագործել է պետութեանը մտածուած ձեւով վնաս հասցնելու նպատակով, ՀՀ-ն վտանգել է ազգային անվտանգութիւնը, գործել է Հայաստանի Հանրապետությունը շահերի դէմ: Դատարանի սեղանին կը դրուեն ՀՀ-ի գոյությունը իրաւականութիւնը վիճարկող ծանրակշիռ փաստարկներ: Վնասարար կազմակերպություն չի կարող շարունակել իր գործունեությունը, լինի դա քաղաքական, հասարակական կամ այլ բնութի:

Հայաստանում լաւ իրաւաբաններ կան, որոնք կարող են ճիշտ լուծումներ եւ ձեւակերպումներ տալ խնդրահարոց իրավիճակներին:

Միջազգային գործընկերներն էլ են առաջին հերթին Հայաստանի հասարակութեան համար պէտք է ողջ պրոցեսը լինի բաց, ընկալելի եւ հարցեր պիտի չառաջանան:

«ՅԱՆՈՒՆ ԻՐԱԻՈՆՔՆԵՐԻ»
ԿԱՅՔԷԶ

Օրէնսդիր եւ Դատական Թելերը Կը Մնան Բռնագաւթուած

Ն. ՅՈՎԱԵՓԵԱՆ

Թաւշեայ չեղափոխութեան արդիւնքում իշխանութեան երեք թեւերից միայն գործադիրում արձանագրուած փոփոխությունները, ըստ էութեան, բաւարար պայման չէ երկրում լուրջ ռեֆորմներ անելու համար: Քանի դեռ օրէնսդիր եւ դատական թելերը շարունակում են բռնագաւթուած մնալ նախկինների կողմից, հանրային յուզումները չեն վերանալու, իսկ կեանքը բնականոն հուն չի վերադառնալու: Այս առումով ներկայումս խիստ հասունացած է ՀՀ գլխաւոր դատախազի փոփոխությունների հարցը: ՀՀ գլխաւոր դատախազ Արթուր Դաւթեանը արդէն իսկ յայտարարել է, որ չի պատրաստուած հրաժարական տալ, ինչը առաջին հերթին հիմնաւորում է արդարադատական համակարգի անկախութեամբ: Ըստ նրա՝ քաղաքական իշխանութեան փոփոխությունը չի կարող ինքնաբերաբար ենթադրել նաեւ դատական համակարգի ղեկավարութեան փոփոխություն: Սա կարելի էր տրամաբանական համարել, եթէ Հայաստանում իշխանութիւն փոխ-

ուած լինէր ընտրությունների միջոցով: Սակայն գործադիրի ղեկավարը հրաժարական է տուել չեղափոխական գործընթացների արդիւնքում, իսկ խորհրդարանական մեծամասնությունը հրաժարուել է վարչապետի թեկնածու առաջարկելու ու ջակցել է հրապարակի թեկնածուի ընտրությունը: Այս դէպքում այլեւս չեն կարող գործել դասական իշխանափոխությունների կանոնները: Իրավիճակի շփոթի պատճառը, թերեւս, չեղափոխութեան առաջնորդների պարկեշտութիւնն է, որոնք նախընտրեցին զարգացումների սահմանադրական ճանապարհը: Խնդիրն այն է, որ չեղափոխութեան պարագայում Սահմանադրութիւնն այլեւս չի կարող աշխատել եւ այն կ'ամ պէտք է մի կողմ դրուի, կ'ամ հարմարեցուի քաղաքական իրողություններին:

Յեղափոխութեան առաջնորդը նախընտրեց առաջին տարբերակը, որի ուրուագծով էլ պէտք է ընթանայ հասարակական-քաղաքական կեանքի յետագայ զարգացումը մինչեւ արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Նորմալ իրավիճակում Սահմանադ-

րութիւնն է թելադրում ներպետական կեանքի զարգացումը, մինչդեռ չեղափոխական շրջափուլում այդ նոյն Սահմանադրութիւնը կ'ամ պէտք է օգտագործուի որպէս գործիք ապահովելու քաղաքական վերափոխումների ընթացքը, կ'ամ արհամարհուի: Եւ եթէ այդ Սահմանադրութիւնը Մայիսի 8-ին օգտագործուեց Նիկոլ Փաշինեանին ՀՀ վարչապետ ընտրելու համար, այն պէտք է նոյն ձեւով օգտագործուի նաեւ արդարադատական համակարգում չեղափոխութեան սերմերը ցանելու համար: Այդ համատեքստում պէտք է ընկալուի ինչպէս Սահմանադրական դատարանի նոր դատաւորի (այսպէ՛ս նախագահի) ընտրությունը, այնպէս էլ գլխաւոր դատախազի փոփոխությունը: Իսկ գլխաւոր դատախազի փոփոխությունը սոսկ քմահաճօքի խնդիր չէ, այլ թելադրուած է չեղափոխութեան տրամաւորութեան հաստատման անհրաժեշտութեամբ:

Դրա փաստարկը, ի դէպ, տուեց ոչ այլ ոք, քան հենց ինքը՝ գլխա-

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՉԱՎԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷԱՏԱՊԱՐԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Նորֆոլկ» ընկերութեան Պաշտօնեաները Կալանաւորուած են



«Նորֆոլկ» ընկերութեան մօտ կատարուած խուզարկութիւններու ընթացքին յայտնաբերուած Ամերիկեան տոլարները

Հայաստանի Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԾԾ) միջնորդութեամբ կալանաւորուած են «Նորֆոլկ» ընկերութեան գլխաւոր տնօրէն՝ 51-ամեայ Արմէն Ունանեանը, ընկերութեան գլխաւոր հաշուապահ՝ 32-ամեայ Տիգրան Զօհրապեանը եւ ընկերութեան հաշուապահական ծառայութեան ղեկավար՝ 27-ամեայ Սիմոն Առաքելեանը:

«Նորֆոլկ»-ի կալանաւորուած տնօրէն Արմէն Ունանեանի փաստաբան Սամուէլ Անտրիասեանը «Ազատութեան» հետ զրոյցին նշած է, որ իր պաշտպանեալին մեղադրանք ներկայացուած է՝ օրէնքով սահմանուած հաշուետուութիւնը, հաշուարկը, յայտարարագիրը կամ հարկման հիմք հանդիսացող հարկը, տուրքը, պարտադիր այլ վճարը հաշուարկելու կամ վճարելու պարտաւորութիւն առաջացնող պարտադիր այլ փաստաթուղթ օրէնքով սահմանուած կարգով եւ ժամկէտներու մէջ չներկայացնելը:

Փաստաբանը առայժմ չէ պատահանած հարցին՝ արդեօ՞ք Ունանեանը ընդունած է մեղադրանքը:

Մինչդեռ, ընկերութեան գլխաւոր հաշուապահ Տիգրան Զօհրապեանի եւ հաշուապահական ծառայութեան ղեկավար Սիմոն Առաքելեանի փաստաբան Արմէն Անդրիկեանը «Ազատութեան» հետ զրոյցին պնդած է, որ իր պաշտպանեալներուն ներկայացուած մեղադրանքները անհիմն են, քանի որ Ազգային անվտանգութեան ծառայութիւնը այդպէս ալ չէ հիմնաւորուած, թէ ինչպէս անոնք աջակցած են հարկեր տուրքեր վճարելի խուսափելու գործընթացին: Հետեւաբար, փաստաբանի խօսքով, անոնք չեն ընդունիր ներկայացուած մեղադրանքը:

Ազգային անվտանգութեան ծառայութեան տնօրէն Արթուր Վանեցեան յայտարարած է, թէ փաստութեան դէմ պայքարի մէջ առաջիկայ օրերուն նոր բացայայտումներ պիտի ըլլան: «Բոլոր ապօրինի հարստացածները, կոռուպցիոն սխեմաներով աշխատողները, կոռուպցիոն պաշտօնեաները կը պատժուեն», - հաւաստիացուցած է ԱԾԾ տնօրէնը:

Քաղաքական Բանտարկեալներու Ազատ Արձակման Գործընթացը Սկսած Է

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը, որ մասնակցած է «Այ. Թի.» (ինֆորմացիոն տեխնոլոգիաներու ձեռնարկութիւններու միութեան) համագումարին, պատասխանած է լրագրողներու հարցերուն:

Անդրադառնալով «Հիմնադիր խորհրդարանի» անդամ ժիրայր Սեֆիրլեանի նամակին, որուն մէջ ան նշած էր՝ «քաղաքատարկեալներին ազատ չարձակելը չլի է վտանգներով», Նիկոլ Փաշինեանը նշած է. «Քաղաքատարկեալներու ազատ արձակման գործընթացն արդէն սկսուել է, եւ դա շարունակուած է: Մենք պէտք է յստակ արձանագրենք մի բան, որ չի կարելի բռնութեան սպառնալիքներով, բռնութեան սպառնալիքների ակնարկներով խօսել ժողովրդի հետ: Ես յոյս ունեմ, որ մենք բոլորս հասկանում ենք, որ եթէ արձանագրուել է քաղաքական իրադրութեան փոփոխութիւն, այդ փոփոխութիւնը պէտք է արձանագրուի բոլորի պահուածքում, որպէսզի մենք կարողանանք սիրոյ եւ համերաշխութեան տրամաբանութիւնը շարունակել մինչեւ վերջ»: Թէ արդեօ՞ք ինքը «ձեռքերը

լուացել է» «Սասնա ծռերու» խնդիրէն, Նիկոլ Փաշինեանը պատասխանած է. «Նախ պէտք է ճշդել, թէ ինչ է նշանակում ձեռքերը լուանալ: Եթէ խօսքն այն մասին է, որ ես ասել եմ, որ չեմ պատրաստուում դատաւորներին հրահանգ տալ, ես հաստատում եմ իր դիրքորոշումը»:

Ան նշած է, որ եթէ անհնազանդութեան բողոքները կ'ընեն յեղափոխութեան անունով, ապա պէտք է դադարեցնեն, որովհետեւ կառավարութիւնը նաեւ իրենցն է: «Իսկ եթէ դա արուած է Հայաստանի Հանրապետութեան ժողովուրդի վստահութիւնը վայելող կառավարութեան նկատմամբ, նշանակում է սաբոթաժ (խափանարարութիւն) ընել Հայաստանի ժողովուրդի նկատմամբ: Սիրոյ եւ համերաշխութեան յեղափոխութիւնը թուլութիւն անուանելը վտանգաւոր մօտեցում է»:

Յայտնենք որ, «Հիմնադիր խորհրդարանի» ղեկավար Զուքաբեան, «Սասնա ծռեր» խումբի անդամներու ազատ արձակելու պահանջով իր հացադուլը դադարեցուց, Փաշինեանի կողմէ իրեն տրուած այցելութեանն էր:

Փաշինեան. «Վեղեատաներ Չեն Լինելու, Բայց Ամենաթողութիւն Էլ Չի Լինելու»

Վարչապետ Նիկոլ Փաշինեան խորհրդարանի մէջ լրագրողներու հետ զրոյցի ընթացքին, անդրադառնալով ԱԺ ՀՀԿ-ական պատգամաւոր Սամուէլ Ալեքսանեանի սուպերմարքէթներու ցանցի մէջ ԱԱԾ կողմէ իրականացուող ստուգումներուն, ըսած է, որ Հայաստանի մէջ օրինականութիւն հաստատելու գործընթաց է:

«Այն, ինչ մենք յայտարարել էինք, որ վեղեատաներ (վրէժխնդրութիւն) չեն լինելու, ես դա վերահաստատում եմ: Բայց յանկարծ որեւէ մէկը չփորձի դա ընկալել որպէս թուլութեան նշան: Այսինքն՝ վեղեատաներ չեն լինելու, բայց ամենաթողութիւն էլ չի լինելու: Եթէ որեւէ մէկը մեր այս դիրքորոշումը կը փորձի մեկնաբանել որպէս թուլութեան նշան, ջախջախիչ հակահարուած կը ստանայ», - ըսած է վարչապետը:

Նիկոլ Փաշինեան բոլորին կոչ ըրած է լրջանալ եւ պետութեան նկատմամբ իրենց բոլոր պարտաւորութիւնները կատարել անմնացորդ:

«Բոլորն ազատուած են բոլոր կոռուպցիոն (փտածութիւն) պարտաւորութիւններէ, բայց ոչ մէկը չմտածի, թէ կարող է պետութեանը խաբել: Եւ ես բոլորին կոչ եմ անում, որ իրենք կամաւոր գան այդ դաշտ, նախկինում չվճարած հարկերը վերահաշուարկեն: Եւ թող այդ ամէն ինչը ԱԱԾ-ի միջոցով տեղի չունենայ: Այո, ԱԱԾ-ն ինչ

խնդիր դրուած է, կը լուծի այդ խնդիրը՝ շատ արագ ու կոշտ, օրինական ճանապարհով, բայց ես բոլորին կոչ եմ անում չհասցնել դրան», յայտարարած է վարչապետը:

Խորհրդարանի մէջ լրագրողներու հետ զրոյցին վարչապետ Նիկոլ Փաշինեանը ըսած է, որ ԱԺ նախագահ Արա Բաբլոյեանը հրաւիրուած էր տօնական միջոցառումներուն:

«Որոշակի թիւրիմացութիւն է եղել, որը ցաւալի թիւրիմացութիւն է: Եւ ես հասկանում եմ, որ Հայաստանում ականդոյթ կայ բոլոր հարցերը վարչապետի մակարդակով քննարկել եւ լուծել, ընդհուպ փողկապի գոյնը, թէ դէմքի ինչ արտայայտութիւն ունեն: Եւ քանի որ հիմա գործող վարչապետը հարկ չի համարում բոլոր մանրամասների մէջ մտնի, թէ ով ինչ ասի, ինչ խօսի, դէմքի ինչ արտայայտութիւն ընդունի, այդպիսի թիւրիմացութիւններ կը լինեն», - ըսած է Փաշինեան:

Ըստ Փաշինեանի՝ համակարգը այն թուլութեամբ կը գործէ, որ իշխանութիւնը խնդիր ունի ընդդիմութեան համար տհաճութիւններ ստեղծելու: Բայց, ըստ Փաշինեանի, այդ տրամաբանութեամբ պէտք է գործել:

Փաշինեանը նաեւ նշած է, որ Մայիս 28-ի միջոցառումներու հետ կապուած, ի հարկէ, խնդիրներ կային, որոնք պէտք է շտկուին:

Երկու Պատգամաւորներ Լքեցին ՀՀ-ն Եւ Հանրապետական Խմբակցութիւնը

Ազգային ժողովի պատգամաւոր Շիրակ Թորոսեանը յայտարարած է Հանրապետական խմբակցութեանն ղուրս գալու մասին: Ֆէյսպուքեան իր էջին վրայ Թորոսեանը գրած է, որ իր խորհրդարանական գործունէութիւնը պիտի շարունակէ որպէս Ազգային ժողովի անկախ պատգամաւոր:

Շիրակ Թորոսեանի յայտարարութեան հրապարակումէն ոչ շատ անց Հանրապետական խմբակցութիւնը հաղորդագրութիւն հրապարակած է, տեղեկացնելով, որ տեղի ունեցած է ՀՀԿ խմբակցութեան նիստ, որու ընթացքին միաձայն որոշուած է Շիրակ Թորոս Շիրակ Թորոսեանը 8 մայիսին վարչապետի ընտրութիւններու ժամանակ քուէարկած էր Նի Նոյնպէս, Ազգային ժողովի պատգամաւոր Արթուր Գեորգեանը իր ֆէյսպուքեան էջի վրայ հաղորդած է Հայաստանի հանրապետա-

կան կուսակցութեանն եւ Հանրապետական խորհրդարանական խմբակցութեանն ղուրս գալու մասին:

«Վերջին շրջանում հայ ժողովուրդը՝ ինչպէս Հայաստանում ապրող, այնպէս էլ սփիւռքում, հոգով ու սրտով ապրում է Հայաստանով, հետեւում է երկրում տեղի ունեցող զարգացումներին, ուրախանում է, ոգեշնչուած է ցանկացած լաւ լուրով, անհանգստանում է ենթադրուող մարտահրաշքերից: Այսօր մեր ձայնը լսելի է, իսկ մեր կարծիքը՝ կարեւոր: Ժամանակն է օգտուել պատմական հնարաւորութիւնից: Հարկաւոր է արագ ինքնակազմակերպուել ներսում, արտաքին քաղաքական յարաբերութիւններում ձեռք բերել անկախութեան աննախադէպ կարգավիճակ եւ արդիւնքում ղուրս գալ շահեկան դիրքերով», - յայտարարած է պատգամաւորը:

Յուզարարները Դարձեալ Կը Պահանջեն Գլխաւոր Դատախազի Հրաժարականը

Խումբ մը քաղաքացիներ գլխաւոր դատախազ Արթուր Դաւթեանի հրաժարականի պահանջով բողոքի ցոյցեր իրականացուցած են անոր աշխատավայրի առջեւ: Ընդդիմադիր «Երկիր Միջանի» կուսակցութեան ղեկավար Զարուհի Փոսթանճեանի պնդմամբ՝ գլխաւոր դատախազը իր անգործութեամբ տարիներ շարունակ հովանաւորած է յանցագործները եւ յեղափոխութեանն էր տեղ չունի պետական համակարգի մէջ:

Արթուր Դաւթեանը գլխաւոր դատախազ ընտրուած էր 2 տարի առաջ, պատգամաւորներու փակ գաղտնի քուէարկութեան որպէս արդիւնք: Ըստ Սահմանադրութեան, դատախազութիւնը ինքնավար մարմին է, եւ անկախ հանգամանքէ, որ իշխանութիւնը փոխուած է, Դաւթեանը կրնայ պաշտօնավարել մինչեւ 2022 թուականը:

Բողոքատարկեալներու առկայութիւնը հերքող պաշտօնեան օր առաջ պէտք է հեռանայ իրաւապահ համակարգէն, ըսած է քաղաքացիական ակտիւիստ Վարդգէս Գասպարին: Ան պնդած է, որ դատախազի ապօրինի գործողութիւններուն որպէս արդիւնք բազմաթիւ անմեղ մարդիկ կը շարունակեն մնալ անազատութեան մէջ:

ԼՈՒՐԵՐ

Ֆրանսայի Արտաքին գործոց նախարար. Դաշնակցությանը իր Պատմութեան Շրջադարձային Փուլի Մէջ Է



Ֆրանսայի եւ Դաշնակցանի արտաքին գործոց նախարարները մամուլի ասուլիսի ընթացքին

ԵԱՀԿ Մինսկի խումբի համա- նախագահ Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Ժան-Իւ Լը Տրի- անը Երեւանի մէջ յայտարարած է, որ Ղարաբաղեան հակամարտու- թեան հարցով ո՛չ հաստատուած սահմանը, ո՛չ ուժի կիրառումը ընդունելի չեն:

Հայաստանի արտաքին գոր- ծոց նախարար Զօհրապ Մնացա- կանեանի հետ համատեղ յայտարա- րութեան ժամանակ ան Ղարաբաղի հարցին այլեւս չանդադարձաւ, փոխարէնը յայտարարեց, որ հպարտ է՝ ինքը առաջին արտաքին գործոց նախարարն է, որ կ'այցելէ նոր Հայաստան եւ կը հանդիպի Հայաս- տանի նոր ղեկավարներուն հետ:

Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը Հայաստանի իր պաշ- տօնակից Զօհրապ Մնացականեա- նի հետ համատեղ ասուլիսին յայ- տարարեց, որ հայ-ֆրանսական յա- րաբերութիւնները պէտք է ա՛լ աւելի խորանան:

Նախարարները խօսած են այս

«Դաշնակցանի Մէջ Շատ Յուզիչ Ու Ոգեշնչող Փոփոխութիւններ Տեղի Կ'ունենան». Էլթոն ճոն

Հայաստանէն հեռանալէ ետք Ինս- թ ա կ ր ա մ ի (Instagram) իր էջի վրայ գրառում կա- տարած է յայտնի բրիտանացի երգիչ էլթոն ճոն. «Հա- յաստանի մէջ շատ յուզիչ եւ ոգեշնչող փոփոխութիւններ տեղի կ'ունենան»:



Բրիտանացի նշանաւոր երգիչ Էլթոն ճոն եւ նախագահ Արմէն Սարգսեան բժշկական կեդրոն այցի ընթացքին

Հրապարակե- լով Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանի կողմէ: Այս հրաշալի երկրի մէջ շատ յուզիչ ու ոգեշնչող փոփո- խութիւններ տեղի կ'ունենան: Շնոր- հակալ եմ բոլորին՝ Տեւիտին եւ գիս այս ձեւով ընդունելու համար»:

Հրապարակելով մէկ այլ նկար, որու մէջ ան գրկախառնուած է լողակապ խնդիր ունեցող հայ տղայի հետ, էլթոն ճոնը գրած է. «Անհար է նկարագրել այն ուրա- խութիւնը, որ կը գգաս՝ տեսնելով, թէ ինչպէս մարդն առաջին անգամ

աշնան Երեւանի մէջ իրականաց- ուելիք գազաթնափողովի մասին: Ֆրանսայի արտաքին գործոց նա- խարարը յայտարարած է, որ սա- շատ կարեւոր իրադարձութիւն է. - «Նախագահ Մաքրոնի պաշտօնա- կան այցը Հայաստան շատ կարե- լոր իրադարձութիւն պիտի ըլլայ մեր երկու երկրներու համար: Մենք միասին պէտք է նախապատ- րաստենք այն ամէնը, ինչ կրնայ աւելի մեծ իմաստ եւ ուժ հաղոր- դել այս այցին: Ֆրանկոֆոնիայի համաժողովը նոյնպէս կարեւոր իրադարձութիւն է, մեծ թիւով պատուիրակութիւններ պիտի այ- ցելին Հայաստան»:

Տեղի ունեցած է նաեւ Զար- գացման ֆրանսական գործակա- լութեան եւ Տնտեսական համա- գործակցութեան համար խթան- ման եւ մասնակցութեան ընկերու- թեան (Պրոպարկո)՝ Հայաստանի մէջ հաստատման եւ գործունէու- թեան մասին համաձայնագրի ստոր- րագրման արարողութիւնը:

բնական կը լսէ: Այս տղայի մօտ յաջողութեամբ լսողական սարքեր տեղադրուած են Starkey Hearing Technologies հիմնադրամի հրաշա- լի խումբի կողմէ: Այս հիանալի բարեգործական հիմնադրամը ողջ աշխարհի մէջ մարդոց կու տայ լսելու շնորհը:

Մէկ այլ նկարի մէջ պատկեր- ուած է Արարատ լեռը, որու մասին Ֆրանսիայը գրած է. «Հայաստանի մէջ մայրամուտի ժամանակ՝ դի- տելով Արարատ լեռան չնաշխար- հիկ գեղեցկութիւնը»:

Պրիճիթ Պրինկ. «Ինձ Կ'ոգեւորէ Դայ ժողովուրդի Ոգին Ու Կորովը»



ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալ Պրիճիթ Պրինկ եւ վարչապետ Նիկոլ Փաշինեան հանդիպումի ընթացքին

Եւրոպայի եւ Եւրասիոյ հար- ցերով ԱՄՆ պետքարտուղարի փոխ- տեղակալ Պրիճիթ Պրինկը 27-28 մայիսին այցելած էր Հայաստան՝ հանդիպումներ ունենալու նոր կա- ռավարութեան եւ քաղաքացիական հասարակութեան հետ, հաղորդած է Հայաստանի մէջ Միացեալ Նա- հանգներու ղեսպանութիւնը:

Վարչապետ Նիկոլ Փաշինեա- նի հետ իր առաջին հանդիպման ընթացքին Պրիճիթ Պրինկը շնոր- հաւորած է այդ պաշտօնին ընտր- ուելու եւ իշխանութեան խաղաղ փոխանցման համար: Ան ողջու- նած է վարչապետի ստանձնած յանձնառութիւնը՝ ուղղուած կո- ուուպցիայի (փտածուծիւն) դէմ պայքարին, եւ առաջարկած է ԱՄՆ-ի շարունակական աջակցու- թիւնը հակակոռուպցիոն աշխա- տանքներու մէջ, ըսուած է հաղոր- դագրութեան մէջ:

Պետքարտուղարի փոխտեղա- կալը արտաքին գործոց նախարար Զօհրապ Մնացականեանի հետ քննութեան ենթարկած է երկկողմ յարաբերութիւններու շարք մը հարցեր: Ան շեշտած է, որ Միաց- եալ Նահանգները յանձնառու է աշխատիլ նոր կառավարութեան

հետ՝ երկկողմ կապերու ամրապնդ- ման եւ դէպի Հայաստան յաւելեալ ամերիկեան ներդրումներու ներգ- րուածան ուղղութեամբ: Պրինկը նկատած է, որ Հայ-ամերիկեան միջկառավարական աշխատանքա- յին խումբը կրնայ հարթակ հան- դիսանալ նպատակներու փոխա- դարձ առաջխաղացման հարցին մէջ իրական տեղաշարժեր ապահո- վելու համար:

Ամերիկացի բարձրաստիճան դիւանագէտը նշած է, որ Միաց- եալ Նահանգները որպէս ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահ պիտի շարունակէ աջակցիլ Լեւո- նային Ղարաբաղի հակամարտու- թեան խաղաղ բանակցային կար- գաւորման եւ կողմերու հետ աշ- խոյնաբեր պիտի աշխատի Մինս- կի խումբի գործընթացի շրջա- նակի մէջ խաղաղ լուծում գտնե- լու ուղղութեամբ:

«Պետքարտուղարի փոխտե- ղակալ Պրինկը իր շնորհաւորանք- ները կը հղէ Հայաստանի կառավա- րութեան ու ժողովուրդին Առաջին հանրապետութեան 100-ամեայ յո- բելեանի առթիւ», - ըսուած է Հայաստանի մէջ ԱՄՆ ղեսպանու- թեան հաղորդագրութեան մէջ:

Դայոց Գեղասպանութիւնը Ծանչցող Նախագիծի Քուէարկութիւնը Դանուած Է Քննութի Օրակարգէն

Հայոց ցեղասպանութիւնը ճանչ- նալու նախագիծի քուէարկութեան հարցը 28 մայիսի դրութեամբ ընդգրկուած է Իսրայէլի խորհր- դարանի օրակարգի մէջ: Այս մասին յայտնած է Jerusalem Post-ը:

Նշուած է, որ Քննութի խօս- նակ Եուրօ Էտիլաշէյնը հարցը հա- նած է օրակարգէն: Անոր մամուլի քարտուղարը, պարզաբանելով տե- ղի ունեցածը, նշած է, որ Քննութի խօսնակը այդ քայլը առած է՝ մտավախութեան պատճառով, որ պարզ չէր, թէ արդեօք մեծամաս- նութիւնը կողմ կ'ըլլայ նախագիծի ընդունման:

Պարբերականը յիշեցուցած է, որ անցած տարիներու ընթացքին Եուրօ Էտիլաշէյնը բազմիցս կողմ արտայայտուած է Հայոց ցեղաս- պանութեան ճանաչման համար, նոյնը ըրած է նաեւ անցեալ շաբթ- ուան ընթացքին:

Քննութի մէջ Հայոց ցեղաս- պանութեան հարցի ընդգրկումը տեղի ունեցաւ Իսրայէլ-Թուրքիա յարաբերութիւններու սրման հեր- թական փուլի մէջ, Երուսաղէմի մէջ ԱՄՆ ղեսպանատան բացումէն

յետոյ բախումներու հետեւանքով, որուն գոհ գացին քանի մը տասն- եակ պաղեստինցիներ:

Հայկական շրջանակներու մէջ Իսրայէլի այս որոշումը՝ հարցը ընդգրկել Քննութի մէջ, բացասա- կան արձագանգ ունեցաւ այն առու- մով, որ Հայոց ցեղասպանութեան խնդիրը մանրադրամ դարձած է հրէական պետութեան համար՝ Թուրքիոյ հետ յարաբերութիւննե- րու մէջ: Առաւել եւս մէկ պետու- թեան պարագային, որ վերապրած է ցեղասպանութիւն:

Բացի այդ, հայկական շրջա- նակներու մէջ Իսրայէլի այդ որո- շումը մեկնաբանուեցաւ որպէս պա-ղեստինցիներու ջարդը «ծածկե- լու» միջոց, երբ Թուրքիան Թել- Աւիւր մեղադրեց ցեղասպանական գործողութիւններ իրականացնելու մէջ, Իսրայէլն ալ հակադարձեց հայերու օրինակով:

Իսրայէլը, յիշեցնենք, Ատր- պէյճանին գէնքի հիմնական մատա- կարարներէն է, աւելին՝ Իսրայէլցի մասնագէտները գէնքերը կը փոր- ձարկեն անձամբ, հայկական դիր- քերու ուղղութեամբ:

Հայաստանի Մէջ Նշուեցաւ



Շարունակուած էջ 1-էն

մում ընդգրկուեց որպէս լիարժէք միութենական հանրապետութիւն: Եւ միայն այս կարգավիճակի շնորհիւ էր, որ Հայաստանը կարողացաւ անցնել դուրս գալ ԽՍՀՄ կազմից եւ ստանալ միջազգայնօրէն ճանաչուած անկախ երկրի կարգավիճակ: Ասել է թէ՛ Առաջին Հանրապետութեան հիմնադրումը պսակուեց Երրորդ Հանրապետութեան հռչակմամբ, փառաւորուեց Արցախեան պատերազմում մեր ժողովրդի տարած յաղթանակով եւ աշխարհահռչակուեց ոչ բռնի, թաւաշէն, ժողովրդական յեղափոխութեամբ: Եւ ահա հայ ժողովուրդը, Հայաստանի քաղաքացին այսօր տօնում է Առաջին Հանրապետութեան 100-ամեակը: Եւ հայ ժողովուրդը, Հայաստանի քաղաքացին ապրում է քաղաքացիական պատմութեան ամենափառապանծ էջը, երբ երկրում հաստատուած է ժողովրդի անշրջելի իշխանութիւն: Եւ այլեւս երբեք, այլեւս երբեք ոչ ոք չի համարձակուի բռնանալ ժողովրդի կամքի վրայ, այլեւս երբեք որեւէ մէկը չի համարձակուի ժողովրդին նուաստացնել ընտրակաշառքի, վարչական հարկադրանքի կամ որեւէ այլ միջոցով: Հայ ժողովրդի վերածնունդն ու թռիչքը կասեցնելու, ժողովրդի յոյսն ու լաւատեսութիւնը կոռուպցիայի ու ամենաթողութեան մէջ խեղդելու ցանկացած փորձ, ցանկացած փորձ կ'արժանանայ ջախջախիչ հակահարուածի: Եւ Հայաստանի Հանրապետութեան յաղթական քաղաքացին այլեւս երբեք թոյլ չի տայ

պետականութեան կամ քաղաքացիութեան կորուստ, ինքնիշխանութեան եւ իրաւունքի կորուստ, հաւատի եւ լաւատեսութեան կորուստ:

Հայաստանի Հանրապետութիւնը երկիր մոլորակի վրայ պէտք է գոյութիւն ունենայ յաւիտեան, Հայաստանի դրօշը պէտք է յաւիտեան ծածանուի՝ խորհրդանշելով մեր ոգին ու հպարտութիւնը, մեր ազատութիւնն ու ինքնիշխանութիւնը: Եւ մեզ համար այսօր պատմական, աննախագէյ հնարաւորութիւն է ստեղծուել դառնալ մեր ժողովրդի հազարամեայ ցաւերի դարմանողը, անփարատելի սզի ամօքիչը, դարաւոր երազանքների իրականացնողը: Եւ ժամանակակից սերունդը՝ որպէս Առաջին Հանրապետութեան հիմնադիր հայրերի, Բաշ-Ապարանի ու Սարգարապատի հերոսների ժառանգներ, պարտաւոր է ստանձնել ու ստանձնում է պատմական այդ առաքելութիւնը»:

Այնուհետեւ տեղի ունեցաւ զինուորական շքերթ՝ «Յաղթանակներու Դար» նշանաբանին տակ:

Շքերթը կը ներկայացնէր հայկական պետականութեան հարիւր տարուայ երեք ռազմական յաղթանակները: Պատմական տարազներով տողանցեցին Սարգարապատի ճակատամատը, Համաշխարհային երկրորդ պատերազմը եւ Արցախեան ազատամարտը խորհրդանշող զինուորական գունդեր:

Երեկոյեան, Հանրապետութեան հրապարակին վրայ, տասնեակ հազարաւոր ժողովուրդի ներկայութեան տեղի ունեցաւ համերգ, որուն յաջորդեց հրավառութիւն:

Սարգարապատի Հարիւրամեակը Ուրուկուայի Մէջ



Հայաստանի հանրապետութիւնը մայիսեան օրերուն ապրեցաւ իր նոր գարունը՝ թաւաշէն յեղափոխութեան յաղթանակը եւ անոր հաստատումը ըլլալ ամենակարեւոր տուրքը Մայիսեան տօներու հարիւրամեակին:

Հազարաւոր քիլոմետրերով այդ իրողութենէն հեռու, շատ անգամ այդ իրողութիւններուն անհաղորդ, հայապահպանման պայքարի մէջ շատ անգամ պարտաւորական, հայ եկեղեցիի, դպրոցի եւ կազմակերպութիւններու խորին տկարութեան մէջ, բայց հեռաւոր Ուրուկուայի մէջ ալ հարիւրամեակի առիթը փափախեց հայոց սրտերը եւ համախմբեց անոնց:

Ուրուկուայի հայ համայնքը մեծ շուքով տօնեց Սարգարապատի հարիւրամեակը՝ այն գոյամարտը, որ երկար դարերու մաքառումէն ետք թոյլ տուաւ հռչակել հանրապետութիւնը, վերականգնել հայոց պետականութիւնը: Կազմակերպութեամբ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Մարաշի Հայրենակցական Միութեան եւ Հայ Ազգային կեդրոնի օժանդակութեամբ եւ գաղութի գործող ուժերու մասնակցութեամբ, Մայիսի 25-ին Մոնթէվիտէոյի Movie թատրոնի լեկուցումը սրահին մէջ գաղութի իր յարգանքի տուրքը մատուցեց, Սարգարապատի, Փաշ Ապարանի եւ Ղարաքիլիսի հերոսներուն: Սեւակի ըսելով անգամ մը եւս

սերունդներն իրենք իրենց ճանչցան Սարգարապատէն: Տեղի ունեցածը սակայն ոչ միայն յարգանքի տուրք էր, այլ գեղարուեստական բարձրորակ ձեռնարկ, որ ոչ միայն կը վերապատմեր պատմական դէպքերը, այլ վայելել կուտար հայ երգն ու պարը:

Տեսաերիզներով ու խօսքով իրարու հետ կապուած երգերով ու պարերով 700 ներկաներու առջեւ հանդէս եկան ՀԱԿ-ի «Գայանէ» պարախումբը կարինէ կուլուեանի ղեկավարութեամբ, ՀԲԸՄ-ի «Կուռնկ» երգախումբը, Ալվարո Յակոբեանի ղեկավարութեամբ, Երեւան 50 նուագախումբը, ՄՀՄ-ի «Գերմանիկ» պարախումբը, Ռօզա Չաքճեանի ղեկավարութեամբ եւ երիտասարդ երգչուհի Նէկտար Միրակեանը:

Ընդհանուր համագրութիւնը կատարեց բանասէր Յովհաննէս Պոտուքեանը իսկ կազմակերպութեան պատասխանատուութիւնն ստանձնեցին ՌԱՏԻՕ ԱՐԱՔՍԻ ղեկավարներ՝ Տիէկօ Գարամանուկեանը եւ Նոթարուհի Մարիանա Գարամանուկեանը:

Հանդիսութեանը ներկայ էին Ռուսաստանի Դաշնութեան դեսպան Նիկոլայ Սոֆինցքի, Հայ Առաքելական եկեղեցւոյ առաջնորդ Գ.Տ. Յակոբ Արք. Գելլենտեանը, Հայ կաթողիկէ եկեղեցւոյ վարդապետ Գենարիոս Լուսարարեանը եւ Հայ Աւետարանական եկեղեցւոյ վերապատուելիներ Ռենէ Լեւոնեանը եւ Օպետ Պոյաճեանը:

ՌԱՏԻՕ ԱՐԱՔՍ

Յունիս 6-ի Ընտրութիւններուն Առթիւ

Շարունակուած էջ 1-էն

թիւնը սատարելու Հայկական Յեղասպանութեան ճանաչման, հան-

րային դպրոցներէն ներս ցեղասպանութեան նիւթի ուսուցման եւ Հայաստանի ու Արցախի Հանրապետութիւններու անկախութեան

աջակցութեան: Զօրակցութեան արժանացած թեկնածուներու մեծ մասը ներկայիս կը պաշտօնավարէ եւ ունի հայնպատ կեցուածք: ՀԱՌ-ի գորակցութիւնը վայելող թեկնածուներու շարքին են

նահանգի կառավարիչի պաշտօնին Անթոնիօ Վիարակոսա, Ամերիկայի Ծերակոյտի աթոռին համար Քէվլըն Տէ Լիոն եւ Ամերիկեան Գոնկրէսի անդամ Ատամ Շիֆֆ: Ամբողջական ցանկը տեսնել «Մասիս» վերջին էջին վրայ:

Թաւշայ 3եղափոխութեան Օրերին Փորձ է Արուել Բանակն Օգտագործել Ցուցարարների Դէմ

ՍԱՐԻՆԵ ԽԱՌԱՏԵԱՆ

Ապրիլի 23-ին, «Իմ քայլը» համաժողովրդական շարժման առաջնորդ Նիկոլ Փաշինեանի ձերբակալումից յետոյ Արշակունեաց պողոտայում շարժմանը մօտ 100 խաղաղապահների միացումը ու դրան հետեւած իրադարձութիւնները բացայայտում են նախկին իշխանութիւնների մտադրութիւնները: Այն է՝ խաղաղապահներին օգտագործել ցուցարարների դէմ, ինչն էլ պատճառ է հանդիսացել, որ խաղաղապահները զանգուստաբար լքել են զօրամասը եւ հրապարակաւ միացել ցուցարարներին:

Այս իրողութիւնը Forrights.am-ին յաջողուեց պարզել այն բանից յետոյ, որ ֆէյսպուքեան տիրոջ-թում ստորագրահաւաք մեկնարկեց ՀՀ ՊՆ խաղաղապահ բրիգադի հրամանատար, գնդապետ Վաղինակ Սարգսեանի՝ Մայիսի 9-ի հրաժարականը չընդունելու պահանջով: Դրանում ներկայացուած էին փաստեր, թէ որ իրադարձութիւններից եւ ինչի արդիւնքում է հրամանատարը հրաժարականի դիմում ներկայացրել:

Դրանում մասնաւորապէս գրուած է, որ զօրամասի հրամանատարը հրահանգուողը էր ենթականերին, բացատրել եւ ձեռք բերել համաձայնութիւն, որ զինուած ուժերի ներգրաւումը ընթացող գործընթացներին անթոյլատրելի է: Սակայն տեղի են ունեցել իրադարձութիւններ, որոնք դրդել են խաղաղապահներին դուրս գալ զօրամասից ու միանալ ցուցին: «Նոյն օրը՝ Ապրիլի 23-ին, զօրամաս ժամանեց ՀՀ ոստիկանութեան կրթական պատրաստակալութեան» դասախօս, մայր Ֆուսիգեանը (Թերեւս խօսքը Մեծամորի ոստիկանապետ Արթուր Ֆրանգեանի մասին է-Մ.Խ.) եւ զինուորականների հետ փորձեց անցկացնել «Ամբոխի ցրման եւ ուժի կիրառման» վարժանքներ:



Հաշուի առնելով այն հանգամանքը, որ լուրեր էին պտտուած ՀՀ ՊՆ Ռազմական ինստիտուտի անձնակազմին ոստիկանական համազգեստ բաժանելու եւ ժողովրդի դէմ հանելու վերաբերեալ, զինծառայողներն ընդվզեցին եւ լքեցին զօրամասը», - գրուած է ստորագրահաւաքի տեքստում: Ըստ այդմ՝ «զօրամասի հրամանատարը խոստացել էր չպատժել զօրամասը լքած զինծառայողներին, սակայն նրան պարտադրեցին անել դա, որը եւ պատճառ հանդիսացաւ նրա հրաժարականի դիմում ներկայացնելուն»:

Պաշտպանութեան նախարարութիւնն ուղղուած մեր հարցմանն ի պատասխան ՊՆ-ից հաստատեցին, որ զինուորների հետ նման վարժանքներ կատարուել են: ՊՆ-ին խնդրել էինք պատասխանել՝ իրականութեանը համապատասխանում է այս տեղեկութիւնը, ինչ էլ պարզել ընտելութիւնը, եթէ այո, արդեօք օրէնքի ո՞ր կէտի համաձայն է ոստիկանութեան մայրը նման վարժանքներ անցրակցել ՊՆ զօրամասում: Ինչպէս նաեւ՝ ի՞նչ նպատակով են վարժանքներն անցկացուել, եւ ի՞նչ գործողութիւնների համար էին պատրաստուած զինուորներին:

« 18.05.2018թ. ՀՀ պաշտպանութեան նախարարութիւնն ուղարկած Ձեր հարցմանն ի պատասխան տեղեկացում եմ. ՀՀ զինուած ուժերի խնդիրները եւ այլ պետական մարմինների հետ համագործակցութեանն առնչուող յարաբերութիւնները սահմանուած են «Պաշտպանութեան մասին» ՀՀ օրէնքի 15-րդ, «Արտակարգ դրութեան իրաւական ռեժիմի մասին» ՀՀ օրէնքի 9-րդ եւ «Արտակարգ իրավիճակներում բնակչութեան պաշտպանութեան մասին» ՀՀ օրէնքի 14-րդ յօդուածներում: ՀՀ ոստիկանութեան ներկայացուցիչը իրավասու է անցկացնել համապատասխան վարժանքներ վերը նշուած օրէնքների շրջանակներում», - ասուած է

ՊՆ մամուլի խօսնակ Արծրուն Յովհաննիսեանի գրաւոր պատասխանում: Սա նշանակում է՝ ՊՆ-ն հաստատում է, որ Փաշինեանի ձերբակալութեան ժամանակ խաղաղապահների բրիգադում ոստիկանութեան մայրը «ամբոխի ցրման եւ ուժի կիրառման» վարժանքներ է իրականացրել զինուորների հետ: Մեր կրկնակի հարցմանը ՊՆ-ից այդպէս էլ չյստակեցրին, թէ ի՞նչ նպատակով են վարժանքներն անցկացուել, եւ ի՞նչ գործողութիւնների համար էին պատրաստուած զինուորներին, յա-

կապէս, որ յայտարարուել էր, որ բանակը չի միջամտելու ներքաղական գործընթացներին:

«Ներքին թշնամի հայոց բանակը երբեք չպէտք է ունենա».

ՊՆ նախկին փոխնախարար ՊՆ նախկին փոխնախարար Անդրանիկ Քոչարեանը կարծում է, որ խաղաղապահներին նախապատրաստուել է օգտագործել արտակարգ դրութիւն յայտարարելու ժամանակ: Այսինքն՝ Մերժ Սարգսեանն այդ օրերին պատրաստուել է արտակարգ դրութիւն յայտարարել եւ օգտագործել զինուած ուժերը՝ համաժողովրդական շարժումը ճնշելու համար:

«Պատրաստուել է նախապատրաստական ինչ-որ գործողութիւն, որը ոստիկանութեան հետ համատեղ պէտք է իրականացուեր», - տեսակէտ յայտնեց ՊՆ նախկին փոխնախարարը՝ յաւելելով. «Կարծում եմ՝ դա սխալ է, չնայած այսօրուայ օրէնքներով դա արդէն հնարաւոր է անել, իսկ նախկինում՝ 2008 թուականին, այդպիսի բան հնարաւոր չէր: Որոշ մարդկանց մտքով անցել է, որ բանակը կարելի է ներքաղաքական գործընթացներին մէջ նորից օգտագործել որպէս ծայրայեղ միջոց: Կարծում եմ, սխալ է, որ երբեւիցէ որեւէ մէկի մտքով չպէտք է անցնի, որ բանակը պէտք է մօտեցնել ոստիկանական գործողութիւններին: Արդիւնքը ինքներս տեսանք»:

Արդիւնքը, ըստ Քոչարեանի, յանգեցրեց նրան, որ խաղաղապահ զօրամասի զինուորները, որպէս բողոքի նշան, լքեցին զօրամասը: «Դա շատ բնական է, որովհետեւ զինուորականը երբեք իրեն ոստիկանական գործառնութիւնի մէջ չի կարող պատկերացնել: Բանակը նախատեսուած է արտաքին թշնամու դէմ պայքարելու համար: Ներքին թշնամի հայոց բանակը երբեք չպէտք է ունենայ», - ասաց Քոչարեանը: Նրա խօսքով՝ նման հրահանգաւորում կարող էր տալ կամ նախկին ՊՆ վիզէն Սարգսեանը կամ ՁՈՒ գլխաւոր շտաբի պետը.

«Ոչ ոք ինքնագլուխ այդպի-

Շար.ը էջ 19

Սերժ Սարգսեանին Եւ Կարէն Կարապետեանին Երկու Գործօն Ստիպեց Յանձնել Իշխանութիւնը

ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ, Գարգարուցավար

Մեր գրուցակիցն է Թբիլիսիի Black Sea Press գործակալութեան գլխաւոր խմբագիր, քաղաքագէտ Գելա Վասաձէն

-Պարոն Վասաձէ, ԳՅ Գախազահ Արմէն Սարգսեանն իր առաջին այցը կատարեց Վրաստան, որի շրջանակում Գա Կարապետեանը եւ ունեցել Վրաստանի Գախազահ Գիորգի Սարգսեանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլիի հետ: Ինչպէ՞ս էք գնահատում այս այցը:

-Դեռեւս ոչ մի կերպ: Ինչ-որ կերպ գնահատելու համար պէտք կը լինի սպասել այդ հանդիպումների աւարտին եւ սպասուող յայտարարութիւններին: Դրանից յետոյ նոր հնարաւոր կը լինի խօսել այդ մասին:

-Մայիսի 30-31-ին էլ Վրաստան կ'այցելի ԳՅ վարչապետ Նիկոլ Փաշինեանը: Ի՞նչ կարող ենք սպասել երկկողմ յարաբերութիւններից, մա՞նաւանդ որ հիմա Նիկոլ Փաշինեանը Վրաստան է գալիս, այսպէս ասած, այլ Գայաստանից:

-Նիկոլ Փաշինեանը բազմիցս

յայտարարել է, որ Վրաստանի հետ յարաբերութիւնները, իրանի հետ միասին, նոր Հայաստանի արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւններից են: Այսօր Հայաստանում բոլորը Փաշինեանից հրաչքներ են սպասում: Վրաստանի հետ յարաբերութիւններում նա հրաչքներ գործելու կարիք չունի, բաւարար է պահպանել այդ յարաբերութիւնների դրական դինամիկան, որն առկայ էր նախորդ իշխանութիւնների օրօք: Իհարկէ, միշտ էլ կայ բարելաւելու տեղ, կան չլուծուած խնդիրներ, բայց այստեղ պէտք է յիշել, որ լաւագոյնը լաւի թշնամին է: Իսկ բոլոր խնդիրները պէտք է լուծել քայլ առ քայլ:

-Որքանով էք դուք հետեւում Գայաստանում ընթացող իրադարձութիւններին: Մասնաւորապէս, ԳՅ նոր կառավարութիւնն արդէն ձեւաւորուած է: Որքանով նոր կառավարութեանը կը յաջողուի պահպանել այս էյֆորիան մինչեւ արտաքին խորհրդարանական ընտրութիւններ:

-Շատ երկար ժամանակի համար էջֆորիան հաստատ չի յաջող-

ուի պահպանել: Իսկ ահա ապացուցել գործերով, որ այս թիմն իսկապէս արժանի է ժողովրդի վստահութեանը, այն ժողովրդի, որը չվախենալով ձերբակալութիւններից ու ճնշումներից, պայքարեցին փոփոխութիւնների, լաւ ապագայի համար, նոր իշխանութիւնները ոչ միայն կարող են, այլեւ պարտաւոր են: Հակառակ դէպքում ոչինչ չի ստացուի:

-Պարոն Վասաձէ, արտաքին ընտրութիւնները եթէ ուշանան, ի՞նչ էք կարծում, հնարաւոր է այդպէս էլ լեղափոխութիւն տեղի չունենայ՝ հաշուի առնելով, որ պաշտպանութիւնը ԳՅ-ն այսօր էլ մեծամասնութիւն է եւ չի շտապում ընտրութիւններ անցկացնել:

-Տեսէք, յեղափոխութիւնն արդէն տեղի է ունեցել, հարցն այն է, թէ կը լինե՞ն յեղափոխական փոփոխութիւններ: Դրանք կարելի է եւ պէտք է իրականացնել: Երբ Փաշինեանը պահանջում էր վարչապետութիւնը, նա պահանջում էր ինչպէս պաշտօնը, այնպէս էլ պատասխանատուութիւնը ժողովրդի առջեւ: Կարծում եմ՝ ինքն ու իր թիմակիցները դա լաւ հասկանում են եւ գիտեն, թէ ինչ պէտք է անեն:

Նրանք հիմա իշխանութեան են, եւ փաստարկը, թէ խորհրդարանում մեծամասնութիւն չունեն, դժուար թէ հայ հասարակութիւնն ընդունի: Եթէ դա իսանգործում է, ապա պէտք է միջոց գտնել, որ այն չխանցարի: Վճռական գործողութիւնների «քարտ բլանշը» Փաշինեանը ժողովրդից ստացել է, հետեւաբար, հիմա ամէն բան կախուած է իրենից:

-Պարոն Վասաձէ, ըստ Ձեզ, ի՞նչը ստիպեց Գախազահին իշխանութեանը, աւելի ճիշտ Սերժ Սարգսեանին, այդքան հեշտ յանձնել իշխանութիւնը եւ որքանով է հաւանական, որ Գա կարող է այն հետ վերցնել:

-Շատ լաւ հարց է: Կարծում եմ՝ Սերժ Սարգսեանին եւ ոչ պակաս կարեւոր է նաեւ Կարէն Կարապետեանին երկու գործօն ստիպեց յանձնել իշխանութիւնը: Առաջինը պայքարի ելած մարդկանց կրիտիկական քանապան էր, եւ այն, որ նրանք պատրաստ էին մինչեւ վերջ պայքարել: Երկրորդը արտաքին գործօնն էր, երբ փաստացի Մոսկուան հրաժարուեց աջակցել գործող իշխանութեանը:

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ ՀԱՐՅԵՐ

ՎԱՐԱՆ ԲԱՅԱՐԵԱՆ

Վերջին շաբաթներին ողջ աշխարհում սփռված հայերը հպարտանում են Հայաստանի իրենց սիրելի Սրբազան մայրաքաղաք Երեւանով, որտեղ իրականացավ աշխարհում առաջին թաւաշէն յեղափոխութեամբ իշխանափոխութիւնը, որը գարմացրեց ոչ միայն հայերին, այլ նաեւ աշխարհի բոլոր պետութիւններին եւ քաղաքագէտներին, որոնցից շատերը չէին հաւատում թաւաշէն յեղափոխութեան յաղթանակին ու իշխանափոխութեանը: Առանց գէնքի, առանց մէկի քիթի իսկ արիւնջու անհնազանդութեան թաւաշէն յեղափոխութեան իրականացումով միանգամից դրականորէն վերափոխուեց նրանց վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ:

Հայոց պատմութիւնը հարուստ է անհատների դերակատարութեամբ իրագործութիւններ իրականացնելու, ինչպէս Գէորգ Մարգարէտունին, Դաւիթ Բէկը, Մխիթար Սպարապետը..., որոնք սերունդներին արժանի լիշատակներ թողեցին իրենց մասին հայոց պատմութեան մէջ:

Եւ մեր օրերի այդ անհատների շարքը համարեց Նիկոլ Փաշինեանը միայն մի տարբերութեամբ, որ եթէ վերեւում հիշատակվածները պայքարում էին Հայաստանի ազատութեան համար օտար զավթիչների դէմ գէնքով, բանակով ու աշխարհագորայիններով, Նիկոլ Փաշինեանը իր համակիրներով առանց գէնքի պայքարեց ներքին թշնամու՜ թաւաշէն յեղափոխութեան (օլիգարխների) դէմ, որոնք ներկայ Հայաստանը հասցրել էին կործանման եզրին եւ՛ հարստութիւնը թաւաշէն յեղափոխութեան, եւ՛ ժողովրդին պարտադրելով արտագաղթել, որի հետեւանքով առաջացավ Հայաստանի գոյատեւելու հարցը:

Փառք ու պատիւ Հայաստանի ժողովրդին, որ ժամանակ առ ժամանակ պոռթկում է Հայաստանը ազատելու իր ներքին թշնամիներից, բայց հազուադէպ դէպքում է հասնում յաջողութեան, ինչպէս Նիկոլ Փաշինեանի պարագային, որը գովելի է, մանաւանդ, որ Հայաստանի նոր սերնդի երիտասարդութիւնը հաւատաց նրան եւ միասնական ճակատով յաղթանակի հասաւ:

Այս առիթով բազմաթիւ շնորհակարաններին ուզում ենք աւելացնել եւս մէկը Նիկոլ Փաշինեանի վարչապետ ընտրուելու առիթի յանձինս Ամերիկայի հայութեան, որի հիմնական մասը ապրելով Գալիֆորնիայում, յատկապէս Լոս Անջելեսում, ամբողջ սրտով շնորհակարանութիւն իր կառավարութեանը, որպէսզի մոռացուեն «արտագաղթ» եւ «վիճակախաղ» (ԱՄՆ-ում հաստատուելու համար) եւ կեանք մտնեն «հայրենադարձութիւն» եւ «հայրենաշինութիւն» բառերը, որոնք օգնեն նոր կառավարութեանը շուտափոյթ վերականգնելու Հայաստանի տնտեսութիւնը եւ բարձրացնելու ժողովրդի բարեկեցութիւնը:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանին եւ իր կառավարութեանը դժուար օրեր են սպասում կառավարութիւնը բնականոն հունի մէջ դնելու հետ գուզահեւ՝ յաղթահարելու ՀՀԿ-ի մարտահրաւէրները, որն իր պատգամաւորներով մեծամասնութիւն լինելով Ազգային ժողովում հեշտութեամբ տեղի չի տայ...: Երիտասարդներով կազմաւորուող նոր կառավարութիւնում

անխուսափելի կը լինեն նաեւ սխալները, քանի որ նրա անդամներից շատերն անփորձ են: Պէտք է լինել չափազանց զգոյշ՝ տհաճութիւններից խուսափելու համար: Կարծում ենք նոր կառավարութեան մէջ հնարաւորութեան սահմաններում պէտք է ընդգրկել նաեւ հին կառավարութեան փորձառու ու բարեհոգի պաշտօնեաներին, որոնց օգնութիւնը կը թեթեւացնի նոր կառավարութեան հոգսերը:

Այսօր աշխարհի հայութիւնն իր բոլոր զգայարանները ուղղած Հայաստանի-Երեւանին, ամէն ուր պէ սպասում է հաճելի լուրերի նոր կազմաւորուող կառավարութեան կողմից: Այս առիթով պէտք է նշել, որ բաւական անհաճոյ գրութիւններ էլ են լինում նոր կառավարութեան մասին, որը բնական երեւոյթ է:

Ուրախալի է, որ աշխարհի բոլոր կողմերից շնորհակարան գրութիւններ է ստանում նոր ընտրուած վարչապետ Նիկոլ Փաշինեանը: Բայց այդ գրութիւններում երբեմն խախտում է բարոյական եւ օրինական մօտեցումը: Մարդիկ պէտք է յարգանքի արժանանան ըստ իրենց պաշտօնի մակարդակի:

«Ասպարէզ» օրաթերթի (տե՛ս Զորքաբերթի, Մայիս 9, 2018) առաջին էջում տեղադրուած է. «Արամ Ա. եւ Գարեգին Բ. Կաթողիկոսները կը Շնորհակարան Նիկոլ Փաշինեանը»: ԱՆԹԻԼԻԱՍ, ԷՋՄԻԱՇԻՆ.- Մայիսի 8ին, Արամ Ա. եւ Գարեգին Բ. Կաթողիկոսները շնորհակարան գրութիւններ յղեցին Նիկոլ Փաշինեանին՝ Հայաստանի Հանրապետութեան վարչապետ ընտրուելուն առիթով:

Ստորեւ կու տանք Արամ Ա. Կաթողիկոսի նամակը. ...»:

Բայց առկա է ներկայ ժամանակներու գիտակցութիւնը՝ եւ տակաւին ներկայ օրերու մեր «թաւշեայ» յեղափոխութեան միտք բանին: Հայը իր նորը կերտելու այս գործընթացը սկսաւ ճիշդ ուղիով՝ «թաւշեայ» իրականութեան մէջ ու անոր միջոցաւ, սակայն ան կը գտնուի նոյն հոգիով եւ մտածումներով զայն ամբողջացնելու հրամայականին տակ, որովհետեւ հայուն կեանքին համար անհրաժեշտ հրամայական է «ապահովութիւն»-ը: Իսկ ինչպէս որ Մայսթրօ Ամիրխանեանը Հայաստանի պետական պատկերասփիւռի կայանին հետ ունեցած զրոյցի մը ընթացքին կատարեց «Մենք շատ թշնամիներ ունենք» կարծիքը ու դիպուկ մատնանշումը, կու գանք հաստատելու, որ այս իմաստով հայուն համար ֆիզիքական ու իր տարածաշրջանի ապահովութիւնը՝ Հայաստանի ու Արցախի հանրապետութիւնները իրականութիւններ են, որոնք կ'արժէ պահել ու ամրապնդել: Այս բոլորին կողքին կայ նաեւ հայուն հոգեմտաւոր ապահովութիւնը, ուր հայը կ'ապրի իր կեանքը՝ կատարեալ հարազատութեամբ, կ'ապրի իր ինքնութեամբ եւ ազգային-քրիստոնէական մշակոյթով: Հայը պարտի կառչիլ իր հոգեմտաւոր ապահովութեան՝ որպէս իր կեանքին ու անոր շարունակականութեան հիմքը:

«Հայը պէտք է կորսնցնէ իր

Շար.ը էջ 19

LIFE INSURANCE INDIVIDUAL & GROUP HEALTH INSURANCE LONG TERM CARE MEDICARE DENTAL & VISION DISABILITY



M MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

Call us today!

(818) 500 9585
(818) 269 0909

Bedros & Siamanto
805 EAST BROADWAY, GLENDALE, CA 91205

CA Insurance Lic. #0494056 / #0C99815
MARONIANINSURANCE.COM

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՅԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ ԵՒ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՆՈՐ ՅԱՐՁԱՆԱԿԸ

ՃՐՏԳ. ԶԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՂՊԱՇԵԱՆ

Ազատ ու անկախ ապրելու ցանկությունը, կամքը եւ վճիռը, մեր ժողովուրդի հազարամեայ պատմության ամեննախնայապատմությունն է: Մեր ազգը, իր երկար պատմության երեւոյթներէն մէկը դարձած է: Մեր ազգը, իր երկար պատմութեան երթին, միշտ բունակալութեան դէմ հերոսական պայքար մղած է՝ իր արեան զնով ազատ ապրելու համար:

Մայիս 28, 1918 թուականը անկիւնադարձ մը եղաւ մեր ազգի կեանքին մէջ. Հայաստանի անկախ Հանրապետութեան հռչակման թուականը: Սակայն Մայիս 28ի նորածնունդ այդ երկիրը՝ Հայաստանը, չունէր կազմակերպուած բանակ, առողջ ու բարգաւաճ տնտեսութիւն, եւ այդպիսով՝ հեշտ թիրախ եղաւ ուրիշներուն, եւ իր կարճատեւ անկախութիւնը ակամայ կորսնցուց՝ մաս կազմելով Սովետական Միութեան, մինչեւ այդ Միութեան իսկ փլուզումը: 21 Սեպտեմբեր 1991ին, սակայն, Հայաստանը հռչակեց իր վերանկախացումը եւ երրորդ հանրապետութեան ծնունդը:

Այս տարի, մեր հայրենիքի առաջին Հանրապետութեան հարիւրամեակը պիտի տօնենք այնպիսի հանգամանքներու մէջ, երբ մեր երրորդ հանրապետութիւնը արդէն իր գոյութեան քառորդ դարը բոլորած՝ կը շարունակէ յարատեւել գոյութեամբ: Անտարակոչ, ներկայ Հայաստանը մեր բոլորին ակնկալած ու երագած դրութեան մէջ չի գտնուիր. պատճառները շատ են, սակայն այժմ ժամանակը չէ անոնց անդադրուելու. աւելի՛ հարկաւոր է ապագայի ընելիքներուն մասին խօսիլ: Մենք պէ՛տք է կառուցան մտնենք մեր հայրենիքին, աշխատինք անոր գոյութեան ամրապնդման ու շարատեւութեան ի խնդիր, որովհետեւ անոր ապագան՝ մե՛ր ապագան է, մեր գաւազներուն եւ գալիք սերունդներուն ապագան:

Հայաստանի անկախութեան հարիւրամեակի տօնակատարութիւններուն զուգահեռ, ունեցանք հայրենիքի մէջ նոր կարգերու եւ նոր կառավարութեան ծնունդի տօնակատարութիւններ եւս. կառավարութիւն մը՝ որ սկիզբ առաւ երիտասարդ ուժերու շարժումով, Նիկոլ Փաշինեանի առաջնորդութեամբ ու ղեկավարութեամբ, եւ ժողովուրդի ճնշումով խախտումն աշակցութիւնը վաճելով՝ յաջողեցաւ խաղաղ ճանապարհով տապալել սահապագայներու իշխանութիւնը եւ ստանձնել երկրին ղեկը, վարչապետ ունենալով Նիկոլ Փաշինեանը, գոր պէտք է շնորհակտենք իր քաջութեան, խիզախութեան եւ յանդգնութեան համար: Նախկին Հանրապետական կարգերը մեղադրուած են երկրին հարստութիւնը կողոպտելու, քաղաքացիական իրաւունքները խախտելու, կառավարական, դատական թէ՛ քաղաքացիական ծառայութիւնները խուճապի մատնելու, ինչպէս նաեւ երկրին դիմագրաւած բազմաթիւ խնդիրները չկարողանալ լուծելու, փտածութիւն, կաշառակերութիւն, գործազրկութիւն, արտագաղթ եւ աւելին պատճառելու յանցանքներով:

Այսօր, աշխարհացրիւ հայութիւնը աչքերը սեւեռած է դէպի

հայրենիք, կը հետեւի հոն տեղի ունեցող փոփոխութիւններուն եւ մեծ յոյսով է, որ հիմնական բարեփոխումներ, բարելաւումներ եւ դրական զարգացումներ տեղի պիտի ունենան: Յուսաբարութեան օրերը անցած են... ժողովուրդը մեծ յոյսերով կ'ապրի եւ պէ՛տք է վառ պահէ այդ յոյսերը, սակայն բոլորս ալ լաւատեղեակ ենք, թէ՛ բարեփոխումները մէկ օրուան ընթացքին տեղի չեն ունենար, ո'չ ալ նոյնիսկ կարճ ժամանակուան ընթացքին, քանզի բազմաթիւ են անլոյծ մնացած խնդիրները:

Երկրին անվտանգութիւնը ապահովելէ ետք, կարելու է երկրի տնտեսական տագնապին դարման մը, եւլք մը գտնել: Անտարակոչ, Հայաստանի բնակչութեան մեծամասնութիւնը չքաւորութենէ կը տառապի, մինչ, անդին, քանի մը տասնեակ ընտանիքներ միլիոններ դիզած են՝ տակաւին ծծելով ժողովուրդին արիւնը: Հարկաւոր է երկրին մէջ միջին խաւ ստեղծել՝ բազմապիսի միջին դարձագրութիւնով վաճառականներէ եւ գործատէրէրէ, համալսարանի շրջանաւարտներէ, արհեստավորներէ, մտաւորականներէ եւ նման այլ քաղաքացիներէ, ինչ որ աշխարհահռչակ մեծահարուստ Գրըգ Գրըգորեան աշխատեցաւ ընել, սակայն չյաջողեցաւ՝ պետական աւագակներուն պատճառով:

Նաեւ, երկրին սահմանադրութիւնը պէտք է մի՛շտ ի գօրու մնայ եւ հարկ եղած փոփոխութիւններուն ենթարկուի՝ համապարփակ ըլլալու միտումով եւ թաւանդներու ու օրէնքները խախտողներու դէմ դռները փակելու համար: Հայաստանի բոլոր քաղաքացիները, անխտիր՝ պէտք է օրէնքին ենթակայ ըլլան. ասիկա նորութիւն մը չէ, ո'չ ալ գիւտ մը. ասիկա միշտ ըսուած է եւ պիտի ըսուի, սակայն այլեւս ժամանակն է, որ այդ մէկը իրագործուի՝ պողպատեայ՝ բռունցքով... Ի՞նչ ըսել է բանակի սպայ մը ծեծով սպաննել ճաշարանի մը մէջ, անոր սեփականատիրոջ թիկնապահներուն կողմէ, կամ՝ քաղաքացի մը սպանդի ենթարկել սակաւապետի մը կողմէ եւ ազատ մնալ...

Հայաստանը ներկայիս նիւթակայ մեծ ներդրումներու կարիք ունի, ըլլա՛ն անոնք հայերէ թէ՛ օտարներէ: Այդ ներդրումները ապահովելու համար պէտք է արմատաւորել վստահութիւն եւ պետական հզօր աջակցութիւն, աշխատանքի եւ աւելուողի ազատ շուկայ, իրաւունքներու ապահովութիւն, իսկ այդ բոլորէն ետք, ինչո՛ւ չէ, նաեւ ստանալ պետական տուրքեր եւ երկրին եկամուտ ապահովել: Անհրաժեշտ է նաեւ մեծ ընկերութիւններու ներդրումը եւ աշխատանքը մեր երկրէն ներս. ներկայ Հայաստանը ազատ շուկայի երկիր է, ընկերավարական կարգեր չունի, սակայն ազատ շուկան ալ իր օրէնքները ունի. անիկա երբե՛ք երկիրը թաւանել չի նշանակել: Կառավարութեան գործունէութեան թափանցիկութիւնը շատ հիմնական է, իսկ աւելի կարեւորը՝ ազատ մամուլ ունենալը, որպէսզի կարող ըլլայ հետեւելու եւ բոլորին պարզելու օրէնքի առկայ որեւէ խախտում՝ որեւէ կողմէ:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան, որ իր հարազատ ժողովուրդի ծո-

«ՅԱՅԱՍՏԱՆԸ ԵՂԱՒ ՅԱՅԱՍՏԱՆ»*

«Բայց ուղիւ մեր եղել է միշտ մթին, եղել է անստոյգ ու անփառունակ, Տարածուել է անբոց ու անծայիտ՝ Ուրիշների փայլով շարունակ Շառագունուած՝ որքա՛ն, որքա՛ն աղէտաւոր...»

Եղիշէ Չարեմց

Ռ. ԿՈՐԻԻՆ

Պատմութեան քառուղիներում շատ բաներից ենք զրկուել անծիր կորուստներով օտարների լծի տակ, 387 թ. կորցրել ենք պետականութիւնը, 428 թ. Հայաստանը բաժանուել է բիւզանդոնի եւ Պարսկաստանի միջև: Վեցից եօթերորդ դարերում արաբների գալով Հայաստանը անցնում է նրանց լծի տակ: Արաբ խալիֆաթի ճանաչումով հիմք է դրոււմ բազրատունեաց թագաւորութեան, մի քանի դար տեւելուց յետոյ վերջ է գտնում բիւզանդոնի սխալ քաղաքականութեամբ կատարուած սելջուկների արշաւանքով, այնուհետեւ Հայաստանը՝ Բարձր Հայքը ինչը դարձրուանակ դառնում է թատերաբեմ, էլ սելջուկներ, մոնղոլներ, թաթարներ, թուրքեր, պարսիկներ եւ ցարական ռուսաստան փոխն ի փոխն եկել եւ իշխել են տարբեր տեսակի տառապանքներ, արտագաղթներ, բռնի կրօնափոխութիւններ, չարչարանքներ, ալան-թաւաններ, կեղեքումներ, գերեզմարումներ, սպանութիւններ, կոտորածներ, ողջակիցումներ, դարաւոր մշակութային կոթողների, քաղաքների եւ բնակավայրերի աւերածութիւններ կատարել:

Մեր անցեալի պատմութեան էջերը գրուել են ողբերով, կսկիծներով, խոր ցաւերով, լաց ու կոծով: Ախր ինչպէս չզբէլ արաբ-Բաշիրի ոճրագործութիւնների մասին 7-8 դարի ընթացքում, Նախիջևանում խաբէութեամբ 1000-ից աւելի Հայաստանի երեւելի նախարարների եւ իշխանների ողջակիցումը եկեղեցիներում եւ կրօնափոխութեան վայրագ արարքները, սպանութիւնները եւ աւերածութիւնները: Թուրքերի գանգուածային կոտորածները՝ ցեղասպանութիւնը 1894-1924, արդեօ՞ք մոռանալու բաներ են սրանք: Թուրքերը Արեւմտեան Հայաստանի մեր ժողովրդին կոտորելուց եւ երկիրը բռնագրաւելուց յետոյ նկատելով հակազդեցութեան որեւէ արձագանք արեւմտեան տէրութիւնների կողմից, այլ նրանց դրական լուծութեամբ պատե՛հ առիթ նկատեցին վերջ տալու հայ ժողովրդի գոյութեան, երեք ուղղութիւններով գէնք ու գրահ մեծ բանակներով յարձակուեցին Արեւելեան Հայաստանի վրայ՝ Բաշարեանի, Ղարաքիլիսէի եւ Սարդարապատի կողմերից, միտում ու նպատակ կար հայութիւնը արմատապէս վերացնելու կեանքի մակարդակից, ինչպէս արել էին Արեւմտեան Հայաստանի ազգաբնակչութեան նկատմամբ, սակայն թուրքի մտքից չէր անցնում, որ հայութիւնը կարող է այս անգամ պաշտպանել իրեն, այդու վստահ ու համոզուած արշաւեց Հայաստանի վրայ իրագործելու իրենց ծրագիրները փանթուրանիստական ծաւալապաշտ կայսրութիւն ստեղծելու թրքալեզու երկրների միացումով:

Ճակատագրական անխուսա-

փելի իրադրութիւն էր ստեղծուել հայութեան համար, մենակ ու առանձին էր մնացել հայութիւնը բազմահազար վոհմակ գագանների հայի արեան ծարաւ թուրքերի դիմաց, լինել չլինելու, մահու եւ կենաց իրավիճակ, բացի պաշտպանուելուց ուրիշ էլք չկար հայութեան համար, այն էլ ինչ կոտորածներից մագապուրծ աղէտեալներով լեցուն ապաստան գտած մեր արեւմտահայ քոյր եւ եղբայրներով:

Չէնք ի ձեռին աշխարհազօր հայութիւնը անվեհեր հրամանատարների ղեկավարութեամբ թրքական բանակներին երեք ճակատներում ջարդ տալով նրանք փախուստի մատնեցին: Սարդարաբադի փառաւոր յաղթութեան արգասիքով ծնուեց Հայաստանի առաջին հանրապետութիւնը Արամ Մանուկեանների, Անդրանիկների, Նոյնիների, Գրոհների, Փիրումեանների, Սիլիկեանների եւ շատ ու շատ արժանաւոր գաւազանների մարտնչումների շնորհիւ, 1918 թ. Մայիս 28-ով Հայաստանը հռչակուեց ինքնանկախ երկիր՝ դարերի ստրկութիւնից հիմք դրուեց հայ ժողովրդի առաջին հանրապետութեան, որը սկիզբը դարձաւ յետագայ հանրապետութիւնների: Պատերազմից յաղթանակով դուրս գալը լինում է ինքնամոռաց մարտիկների գոհաբերութեամբ, այո՛, մինչեւ ցորենը հողում չմեռնի բազմաթիւ արդիւնք չի տայ:

Մեր օրերի Արցախի ազատագրումը նոյն այդ ոգին էր առաջնորդում մեր քաջարի մարտնչողներին: Փառք ու պատիւ հայրենիքի գոյութիւնը յաւերժացնող բոլոր ու բոլոր նահատակներին մեր հայոց պատմութեան ողջ ընթացքում: Սարդարաբադի յաղթութեամբ առաւել յաջողութիւնների կարող էինք հասնել, եթէ իրատես ու հեռատես քաղաքականութիւն որդեգրուէր: Վերնագիրը մեծն Վիլսոն Սարդեանի ասույթն է, իրաւ տեղին է ասուած, քանի որ Հայաստանը պաշտօնապէս ճանաչուեց որպէս երկիր: Այսօր հայ ժողովուրդը տօնում եւ յիշատակում է հարիւրամեակը Սարդարաբադի մեծ յաղթանակի եւ առաջին հանրապետութեան հիմնադրումը: Հազար փառք ու պատիւ Սարդարաբադի եւ 1918, Մայիս 28-ը կերտողներին: Գալով նոր օրեայ հայրենիքում կատարուած աննախընթաց անարիւն եւ թաւաշէտ յեղափոխութեանը Նիկոլ Փաշինեանի գլխաւորութեամբ եւ ղեկավարութեամբ խանդավառուած է ամբողջ հայութիւնը թէ՛ Սփիւռքում եւ թէ՛ Հայաստանում, յոյսեր են փայտալուծում ապագայ յաջողութիւններով դէպի տնտեսական եւ քաղաքական նպատակաւաց բարգաւաճում եւ հզօրացում տարբեր բնագաւառներում երիտասարդ եւ բանիմաց ուժերով կազմուած Նիկոլ Փաշինեանի կառավարութեան միջոցով:

*Մեծն Վիլսոն Սարդեանի ասույթ

www.massispost.com
daily news updates

ՍՓՅՈՒՌՔԻ ԱՄԵՆԱՄԵԾ ՇԱԲԱԹՕՐՅԱ ԴՊՐՈՅՈՒ



Մայրենի լեզու, հայ գիրք, հայի աննկուն ու մարտնչող հոգի եւ քրիստոնէական մեծ հաւատք. ահա սրանք են մեր ժողովրդի յաւերժութեան գրաւականը, որի դէմ անկարող գտնուեց ցանկացած զէնք ու թշնամի: Այս ներուժի բարգաւաճմանն է ծառայում Հիւսիսային Ամերիկայի Հայոց թեմի Առաջնորդանիստ Սրբոց Ղեկնարկեանց Մայր Տաճարի «Փոքրիկ Հրեշտակներ»

իրենց աշխատանքները, որոնք պատմում են հայրենիքի եւ հայ յայտնիների մասին: Դպրոցի առօրեան յագեցած է շատ հետաքրքիր միջոցառումներով: Անցնող ուսումնական տարին եւս բացառութիւն էր: Դեկտեմբերի 23-ին 2-5-րդ դասարանի աշակերտները՝ ուսուցիչների գլխավորութեամբ կազմակերպել էին Ս. Ծննդեան հիւսիսային միջոցառում, որն ուղեկցում է «Հայաստանից



շաբաթօրեայ դպրոցը, որն իր գործունէութեան ընթացքում ունեցել է բազում ձեռքբերումներ: Այս շրջանում անուն, համբաւ, հեղինակութիւն վաստակած կրթօճախն իր կայուն տեղն ունի կրթութեան ու մշակութի բնագաւառում՝ միաժամանակ պահպանելով միայն այս դպրոցին բնորոշ, յատուկ առաւելութիւնները:

ժամանած» առատաձեռն Ձմեռ պապիկի այցելութեամբ:

Յատկանշական էր Փետրուարին գրքի եւ մայրենի լեզուի տոները կապակցութեամբ չորրորդ դասարանի աշակերտների պատրաստած պատաստները եւ խաղ մրցոյթները:

Ըստ ձեւաւորում աւանդութեան՝ ամէն տարի Ապրիլի 24-ի մերձակայ շաբաթ օրը, աշակերտներն ուսուցիչների, տնօրինութեան եւ ծնողների հետ հաւաքում են Մայր Տաճարին կից Սրբոց Նահատակաց խաչքարի շուրջ, որտեղ ծաղիկներ են խոնարհում եւ աղօթում անմեղ զոհերի յիշատակի համար՝ խնդրելով նաեւ նրանց բարեխօսութիւնը: Սա հայրենասիրութեան վառ դրսեւորում է, որը երեխաներին ուղղորդում է ապագայի նկատմամբ ունենալ կամք եւ հաստատակամութիւն:

Իւրաքանչիւր հայ մանուկ պէտք է լաւ իմանայ իր ժողովրդի պատմութիւնը եւ դաստիարակուի ազգային արժանապատուութեան ոգով: Դրա համար էլ հաստատութիւնն աշակերտներին մէջ փորձում է սերմանել հայրենիքի նկատմամբ անհատնում սէր, մշտական հոգատարութիւն եւ այն պահպանելու, պաշտպանելու ձգտում: Դպրոցում երեխաները դաստիարակւում են որպէս մեծ հայրենասէրներ, որովհետեւ ու՞մ է պէտք բարձրակարգ կրթութիւնը, երբ անձը չի սիրում եւ չի ճանաչում իր հայրենի երկիրը:

Ամփոփիչ եւ հաշուետու ամսվերջի հանդէսը տեղի ունեցաւ 2018 թ.-ի Մայիսի 19-ին: Բացման խօսքում, տնօրէն, բարեշնորհ Յովհաննէս սարկաւազ Գումրույեանը նշեց, որ այս տարուայ միջոցառումները նուիրուած են մայրենեան յաղթանակներին՝ Աւարայրից մինչեւ Սարդարապատ, Արցախի ու մեր օրերը: Երկմասանի յայտագիրը մեկնարկեց առաջին դասարանի աշակերտների Ալբերտարանի հանդէսով, որի ժամանակ սաներն ստացան «Տառածանաչութեան վկայական»-ներ: Աւարտական 6-րդ դասարանի միջոցառումը «Իմ հայրենիքը Հայաստանն

է» թեմայով հիացրեց բոլորին իր տրամաբանական կուռ հագեցուածութեամբ, գրական, գեղարուեստական ու մշակութային անդրադարձումներով ու պատմութեան վերլուշով: Վերջում աշակերտները իրենց շնորհակալական խօսքն ասացին ուսուցիչներին, դպրոցի տնօրինութեանը եւ Սրբոց Ղեկնարկեանց Մայր Տաճարի հոգեւոր պաշտօնէութեանը: Հարկ է նշել, որ աշակերտներին մշտապէս այցելում է թեմական առաջնորդ, բարձրաշնորհ Տ. Յովնան արք. Տէրտէրեանը: Նա ծանօթանում է երեխաների ձեռք բերած

ՊԵՂԱՆԻ ԿԱՅՐԵՆԱԿԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ԳՈՒՐՈՒԱԾ ԿԱՆՈՒԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԱՐԳԻՍ ՄԱՃԱՌԵԱՆ

Շաբաթ, Մայիս 12, առաւօտեան ժամը 10.30-ին, Նորթ Հոլիվուտի Blush Banquet Hall-ի մէջ մայրերուն եւ Մայր Հայաստանին նուիրուած գեղարուեստական ճոխ ելոյթներով տօնակատարուեցաւ Տիկնանց յանձնախումբի կողմէ կազմակերպուած Մայրերու Օրուան հանդիսութիւնը: Շքեղ սրահը լեցուած պէյլանցիներով եւ հիւրերով: Տիկնանց յանձնախումբի քարտուղար եւ հանդիսավար Վարսեր Մարգարեան, բարի գալուստի իր խօսքը սկսելով Ձարենցի «Ամբոխները խելագարուած» պոեմի մարտաշունչ, անմահ բառերով, բոլոր ներկաներու զգացումներուն թարգմանաբար հանդիսացաւ: Ան շնորհակարտեց թէ՛ Մայրերու Օրը եւ թէ՛ Հայաստանի մէջ Նիկոլ Փաշինեանի առաջնորդութեամբ իրագործուած թաւաշէյ յեղափոխութեան յաղթանակը: «Փառք Աստուծոյ, մենք արդէն ունենք յաղթանակած երկիր», ըսաւ հանդիսավարը, հայրենի ժողովուրդին մաղթելով ազատ, անկախ եւ արդար Հայաստան: Ապա, Հայոց մայրերուն նուիրուած ինքնագիր խորիմաստ, գեղեցիկ բանաստեղծութեամբ մը պանծացնելէ ետք մօր կոչումն ու առաքելութիւնը, Վարսեր Մարգարեան ամբիտն հրաւիրեց Պէլլանի Միութեան ատենապետ Պր. Մանուկ Տօնոյեանը: Պր. Տօնոյեան յիշեցնելէ ետք, թէ մայրերու առաջնային պարտաւորութիւններէն մէկն է իրենց գաւակները հայեցի դաստիարակութեամբ, ոգիով ու հայերէն լեզուով մեծցնել, իր կարգին շնորհակարտեց բոլոր մայրերը իրենց տօնին, ինչպէս նաեւ Նիկոլ Փաշինեանը՝ Հայաստանի վարչապետ ընտրուելուն առիթներով, մաղթելով բարի ժամանց բոլորին:

հեռուստածրագրի հաղորդավար Նունէ Աւետիսեանը, որ շնորհաւորական իր խօսքը գարդարեց Պ. Մեակի «Մօր ձեռքերը» բանաստեղծութեան վարակիչ ասմունքով: Ազատամարտիկ Հրանդ Մաթոսեան իր կարգին շնորհակարտեց ետք Մայրերու Տօնը, խնդրեց ներկաներէն որ իրենց նուէրներով քաջալերեն օրուան նուիրահաւաքը, որուն արդիւնքը լրիւ պիտի յատկացուի գոհուած եւ վիրաւորուած ազատամարտիկներու այն ընտանիքներուն, որոնք անտեսուած էին Հայաստանի նախորդ կառավարութեան կողմէ: Տիկնանց յանձնախումբի խօսքը ներկայացուց Սիւզի Հեքիմեանը. ան իր կարգին շնորհակարտեց մայրերը եւ շնորհակալութիւն յայտնեց բոլորին իրենց ներկայութեան համար:

Օրուան հրաշալի յայտնութիւնը եղաւ՝ ձայնի ու երգարուեստի զարմանահրաշարժանիքով օտուած տասը տարեկան Մէլլի Մինասեանը, որ երգեց աշուղ Նազեկի «Մօր սիրտը» եւ իտալական «Օ սոյէ միօ» երգերը, արժանանալով որոտընդոտ ծափահարութիւններու եւ «պրաւօ»ներու: Անկասկած, մեծ, շատ մեծ, համաշխարհային տարողութեամբ համբաւ մը կը սպասէ մեր անուշիկ, հրաշածնունդ Մէլլին:

Փոքրիկն Դաւիթ Գասպարեանը արտասանեց Շիրազի «Մայրս» եւ «Բալլադ» ստեղծագործութիւնները, նոյնպէս արժանանալով Չերմ ծափահարութիւններու:

Պարուհիներ, Անի եւ Մարինէ Բաթնազեան քույրերը հայկական ժողովրդական երկու պարերու գեղեցիկ մատուցումով, գեղարուեստական յայտագրին բերին յաւելեալ գեղեցկութիւն մը:

Արա Պարի Ստուդիոյի սաներ՝ Ռազմիկ Թանաշեան եւ Անուշ Սալմասեան, իրենց ներդաշնակ ու գեղեցիկ պարերով արժանացան Չերմ գնահատանքի:

Նուիրատուութիւններէն գոյացաւ 5,390 տոլար, որ, ինչպէս ըսինք, պիտի յատկացուի անտեսուած գոհուած եւ վիրաւորուած ազատամարտիկներու ընտանիքներուն:

Տեղի ունեցաւ վիճակախաղ եւ բախտաւորները շահեցան պատշաճ, գեղեցիկ նուէրներ:

Ժամերու վրայ երկարաձգուող պաշտօնական յայտագրին յաջորդեց հայկական շուրջպարերու գուարթ, ետանդուն ու խիստ հաճելի պահ՝ օրուան DJ-ի հայկական եւ միջազգային ճոխ երաժշտութեամբ, որ տեւեց Մայրերու Օրուան նուիրուած այս գեղեցիկ հանդիսութեան մինչեւ աւարտը:

Իսկապէս, ամէն ինչով յիշատակելի եւ խիստ գնահատելի էր Պէլլանի հայր. միութեան Տիկնանց յանձնախումբին Մայրերու Օրուան նուիրուած այս հանդիսութիւնը:


Ապա, Վարսեր Մարգարեան նշեց անունները սրահին մէջ ներկայ հիւրերէն, Պէլլանի հայր. միութեան նախկին ատենապետ Տիգրան Սարգսեանի, միութեան գործունէութեան մամուլի մէջ արձագանգող Սարգիս Մաճառեանին, Նունէ Աւետիսեանին, օրուան պատուաւոր մայր, վաստակաւոր արտիստուհի Վիլլետա Գեղորգեանին եւ շարք մը այլ հիւրերու:

Օրուան առթիւ շնորհակարտական ելոյթներ ունեցան, Պէլլանի հայր. միութեան Չերմ բարեկամ եւ միշտ աջակից, արուեստագիտուհի եւ հասարակական գործիչ Մագի Խլղաթեանը, որ նաեւ երգեց մայրերուն եւ Երեւանին նուիրուած երկու երգեր՝ «Մայրիկ» (խօսք եւ երաժշտ.՝ Մագի Խլղաթեանի) եւ «Երեւան» (խօսք՝ Յասմիկ Վարոսեանի, երաժշտ.՝ Մագի Խլղաթեանի): Անունի ասմունքով եւ «Բարեւ»

գիտելիքներին, խրախուսում եւ իր օրհնութիւնը բաշխում նրանց: Առաձնակի մտերմութիւն է ստեղծուել նաեւ առաջնորդանիստ Սրբոց Ղեկնարկեանց Մայր Տաճարի հովիւ, արժանապատիւ Տ. Խաթակ քահանայ Շահբազեանի եւ աշակերտների միջեւ: Ուսումնական տարին աւարտուեց, սակայն պաշտօնէութիւնը չի բաւարարուում նրանով, որ անցնող տարիներին դպրոցը դարձել է սփիւռքի ամենամեծ ու հզօր միօրեայ վարժարանը, այլեւ մշտապէս համալրում է դպրոցը նոր արդիական միջոցներով ու կրթական ծրագրերով:

է» թեմայով հիացրեց բոլորին իր տրամաբանական կուռ հագեցուածութեամբ, գրական, գեղարուեստական ու մշակութային անդրադարձումներով ու պատմութեան վերլուշով: Վերջում աշակերտները իրենց շնորհակալական խօսքն ասացին ուսուցիչներին, դպրոցի տնօրինութեանը եւ Սրբոց Ղեկնարկեանց Մայր Տաճարի հոգեւոր պաշտօնէութեանը: Հարկ է նշել, որ աշակերտներին մշտապէս այցելում է թեմական առաջնորդ, բարձրաշնորհ Տ. Յովնան արք. Տէրտէրեանը: Նա ծանօթանում է երեխաների ձեռք բերած

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՍՓԻՌՔԱՅԱՅ ԿԵԱՆՔԵՐ, ԻՆՉՊԵՍ ՈՐ ՏԵՍԱՅ» ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ԾԵՊԵՏԵԱՆ



Ուրախ եմ տեղեկացնելու, որ նոր գիրքս՝ «Սփիրքայաճ Կեանքեր, Ինչպես Որ Տեսայ», լույս տեսաւ Ապրիլի 2018-ին: Յոյսով եմ, որ շատերու համար հետաքրքրական հրատարակութիւն մը պիտի ըլլայ, որովհետեւ աշխարհի ամենամեծ սփիրքի համայնքներէն մէկուն մասին՝ ազգային շունչով գրուած, յօդուածներու շարք մը կը ներկայացնէ:

Գիրքը կը նկարագրէ հայ անհատներու, ընտանիքներու, մշակութային եւ կրթական հաստատութիւններու ամէնօրեայ կեանքը, անոնց պայքարը հայ լեզուի, մշակութի եւ ինքնութեան պահպանման համար՝ Ատիս Ապապայի, Հալէպի, Թաիլանդի, Նիւ Եորքի, Սանթիակոյի կամ Չիլիի մէջ:

Ըստ գիրքի խմբագիրին՝ «Դոկտ. Ճէպէճեանի՝ 2011-էն 2017-ի միջեւ գրած յօդուածները,

լաւագոյն վկան են անոր առողջ տեսլականին, բացառիկ եռանդին, խիզախ վերլուծումներուն, հասուն մտածելակերպին եւ հաստատ հաւատքին անցնելու եօթ տարիներուն ընթացքին՝ միշտ առաջնային դասելով ինքնութեան պահպանման հաշուին փշոտ բաց անսակարկելի ճանապարհը»:

Աւելի քան 100 լուսանկարներով, 550-էջ բովանդակութեամբ այս գիրքը վկայութիւն մըն է ազգի մը վերապրելու, գոյատեւելու կամքին՝ հայ ժողովուրդին, որ 2018 թուականին կը տօնէ Հայաստանի Առաջին Հանրապետութեան 100-ամեակը եւ 20-րդ դարու Առաջին Յեղափոխութեան 103-րդ տարելիցը:

Ստանալու համար դիմել հեղինակին՝ Դոկտ. Հրայր Ճէպէճեանի՝ hrayrj@mtmail.com.cy

Օրէնսդիր Եւ Դատական Թելեր

Շարունակուած էջ 2-էն

Լոր դատախազը, երբ բացատրում էր, որ Ապրիլի 22-ին Նիկոլ Փաշինեանը ձերբակալուել էր ապօրինի գործողութիւնների համար: Դատախազն անգամ միջնորդութիւն էր ներկայացրել խորհրդարան պատգամաւորին անձեռնմխելութիւնից զրկելու համար: Սակայն չաջորդօրը ՀՀ առաջին փոխվարչապետի միջնորդութեամբ ետ էր կանչել միջնորդութիւնն, ու քրէական գործին ընթացք էր տուել:

Միթէ այսպիսի մեկնաբանութիւն տուող դատախազը կարող է արդար ու անաչառ համարուել: Ի վերջոյ, եթէ Փաշինեանը յանցանք էր գործել, որի համար պէտք է զրկուեր պատգամաւորական անձեռնմխելութիւնից, ապա արդեօք ճիշտ է աչք փակել նման յանցանքի վրայ: Արդար դատախազը պէտք է պատասխաներ՝ արդեօք Ն. Փաշինեանի գործողութիւններում յանցակազմ կա՞ր, թէ՞ ոչ: Եթէ կար, անկախ քաղաքական նպատակաշարժութիւնից, յանցանք գործած անձը պէտք է պատասխանատուութեան ենթարկուեր: Եւ այստեղ բացարձակապէս կարելու էր չէ՛լ աչք անձը դարձել է ՀՀ վարչապետ, թէ պատգամաւոր է կամ հասարակ քաղաքացի: Դատախազի քրէական մեղադրանքների յարուցման ու առաջադրման հիմքում պէտք է լինի բացառապէս իրաւական տարրը, որովհետեւ առանց քրէական օրէնագրի փո-

փոխութեան չի կարող նոյն արարքը մէկ վարչապետի ղեկավարութեան շրջանում ձեւակերպուել մի ձեւով, իսկ միւս ղեկավարման լիովին այլ կերպ: Այնինչ նաեւ ապացուցուեց, որ այդ քրէական գործը շինծու էր՝ քաղաքական ենթատեքստով:

Ահա այստեղ է, որ դրսեւորուած է գլխաւոր դատախազի անձնական պատասխանատուութեան հարցն ու անհամարժեքութիւնը նոր իրավիճակին: Ինչպէ՞ս կարող է Արթուր Դաւթեանը համոզել, որ Ապրիլի 22-ի ընկալումով ընդդիմաբանական ցոյցերը ապօրինի ու քրէածին էին, իսկ Մայիսի 22-ին՝ ոչ: Իրաւական ինչպիսի հիմնաւորումներ էլ որ բերուեն, իրադրութեան փոփոխութեան մասին որպիսի արդարացումներ էլ հնչեցուեն, դրանք աւելի անխոցելի չեն դարձնում դատախազի անձնական պատասխանատուութեան հարցը: Իսկ գլխաւոր դատախազը անձնական ու պաշտօնական պատասխանատուութիւն է կրում իր եւ իր ղեկավարած գերատեսչութեան գործողութիւնների համար: Ինչպէ՞ս կարող է քաղաքացին վստահել այն գլխաւոր դատախազին ու նրա ղեկավարած կառուցին, եթէ քաղաքական իրավիճակի փոփոխութեամբ նոյն արարքը մերթ մեկնաբանուած է ապօրինի, մերթ՝ ոչ: Եթէ դատախազի կարծիքը ցայսօր չի փոխուել, եւ նա Ապրիլի 22-ին Նիկոլ Փաշինեանի գործողութիւնները շարունակում է համարել


ԱՐԱՍԵՆ ՆՈՐ ԳԻՐՔ «ԱՍՏԴԵՐՈՒ ԶԵՂԵՂ» ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹԻՒՆ, 200 ԷՃ

Դուրեանի խորունկ զգացմունքայնութիւնը, անհատի նուրբ ապրումները պատկերելու տաղանդը, մահուան՝ արուեստով յաղթելու հանճարեղութիւնը զինքը եզակի հեղինակի մը վերածելու բազմաթիւ ազդակներէն օրինակներ են միայն:

Պետրոս Դուրեան Արեւմտահայ գրականութեան ամենասիրուած հեղինակը թերեւս, որու բազմաթիւ անգամներ տպագրուած գործերը՝ «Տրտունջք»ը, «Լճակ»ը, «Թրքուհին»ը եւ միւսները գոց կ'արտասանեն նոյնիսկ անոնք, որոնք հազիւ հայկական դպրոց մը աւարտած եւ յետոյ չեն առնչուած հայ կեանքին: 21 տարեկան ծաղիկ հասակին թոքախտի պատճառով կեանքէն հեռացած կեանքով լեցուն այս բանաստեղծը իր ստեղծագործութիւններով հանդիսացած է հայ գրականութեան զարգացման անկիւնաքարերէն մէկը, բազմաթիւ անգամներ իրաւամբ համեմատուելով համաշխարհային գրականութեան տիտաններուն հետ: Դուրեանի խորունկ զգացմունքայնութիւնը, անհատի նուրբ ապրումները պատկերելու տաղանդը, մահուան՝ արուեստով յաղթելու հանճարեղութիւնը զինքը եզակի հեղինակի մը վերածելու քանի մը ազդակներէն օրինակներ են միայն:

Դուրեանի երկերուն այս նոր հրատարակութիւնը՝ «Աստեղերու հեղեղ»ը, կը բովանդակէ հեղինակին բանաստեղծութիւնները, յօդուածներն ու նամակները՝ տրուած ծանօթագրական ճոխ տեղեկութիւններով, ինչպէս նաեւ կենսագրական հարուստ տուեալներով:

Հրատարակութիւնը նախատեսուած է ո'չ միայն համայնքային դպրոցներու ուսուցիչներուն ու աշակերտութեան համար, այլ նաեւ բոլոր անոնց համար, որոնց հոգիներէն ներս վառ կը մնայ Պետրոս Դուրեանի հանդէպ սէրը, ինչպէս նաեւ առհասարակ բանաստեղծութեան նկատմամբ



վառ հետաքրքրութիւնը:

Կենսագրութիւն
Պետրոս Դուրեան ծնած է 20 մայիս 1851-ին, Սիւլիտար: Յաճախած է երբեմնի համբաւաւոր ձեմարանը, գոր աւարտած է 1867-ին: Կ'աշխատի տարբեր վայրերու մէջ: Այդ տարիներուն կը յօրինէ իր անդրանիկ պատմական թատերախաղը: Հետզհետէ բեմ կը հանուին նաեւ միւս թատերգութիւնները, որոնց ներկայացումներուն ներկայ կ'ըլլար անձամբ:

1869-ին Դուրեան ճանաչում կը գտնէ նաեւ որպէս բանաստեղծ ու հրատարակագիր: Կը հրատարակուի «Զօն առ Հայրիկն Խրիմեան ազգասէր նորընտիր Պատ. Կ. Պոլսոյ» բանաստեղծութիւնը:

Պետրոս Դուրեանի մօտ թոքախտը ի յայտ կու գայ 1871-ի: Կը մահանայ 21 յունուար 1872-ին:

Բանաստեղծի մահէն ետք կը տպագրուին իր երկերը, եւ գոյացած գումարով կը կանգնեցուի շիրիմը՝ 1874-ին: Տապանագիրի հեղինակն է 14-ամեայ եղբայրը՝ Միհրան (հետագային՝ Եղիշէ արք. Դուրեան):

Նա չի կարող պատշաճօրէն իրականացնել սահմանադրութեամբ իրեն վերապահուած լիազօրութիւնները, քանի որ չի վայելում ինչպէս գործադիր իշխանութեան, այնպէս էլ հասարակութեան վստահութիւնը: Իսկ նման պայմաններում ո'չ դատախազը, ո'չ էլ նրա ղեկավարած մարմինը չեն կարող արդիւնաւետօրէն աշխատել՝ ժամանակ ձգելու միջոցով ընդամէնը սպասելով հարկադրեալ հրաժարականին:
«ԺՈՂՈՎՈՒՐԴ»

OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ՄԱՐԶԱԿԱՆ

Բեյլի Գլուխգործոց Կուլերը «Ռեալին» Պարգևեցին Եւրոպական Ախոյեանների 13-րդ Գաւաթը



Մատրիդի «Ռեալը» 13-րդ անգամ պատմութեան մէջ եւ երրորդ տարին անընդմէջ նուաճեց ֆուտպոլի եւրոպական Ախոյեանների Գաւաթը:

Ուկրանիայի մայրաքաղաք Կիւեւում տեղի ունեցած Ախոյեանների լիգայի եզրափակիչում Արքայական ակումբը 3:1 հաշուով առաւելութեան հասաւ անգլիական «Լիւերպոլի» նկատմամբ:

Առաջին խաղակեսում «Ռեալի» աւագ Սերխիո Ռամոսի կոպիտ խաղից յետոյ ուսի վնասուածք ստացաւ «Լիւերպոլի» լաւագոյն ռմբարկու, եգիպտացի կիսապաշտպան Մոհամեդ Սալահը, որը ստիպուած էր փոխարինուել 31-րդ րոպէին: Նա արտասուելով թողեց խաղադաշտը:

Երկրորդ խաղակէստում առաջինը յաջողութեան հասաւ «Ռեալը»: Զաւեշտայի կողմէ բաց թողեց Կարիուսը, որը փորձեց գնդակը մտցնել խաղի մէջ, սակայն Բենգեմայի պրեսինգի պատճառով կոպիտ սխալ թոյլ տուեց, եւ ֆրանսացի յարձակուողը բացեց հաշիւը: Սակայն ընդամէնը 4 րոպէ անց գերմանացի Յոլերգեն Կլոպի գլխաւորած թիմի ֆուտպոլիստները վերականգնեցին հաւասարութիւնը: Անկիւնային խաղարկումից յետոյ խորպիաթ պաշտպան Դեյան Լովրենը կատարեց արդիւնաւէտ փոխանցում, իսկ սենեգալցի յարձակուող Սադիո Մանեն գրաւեց կոստառիկացի Կեյլոր Նաւասի պաշտպանած դարպասը:

83-րդ րոպէին Բեյլը դարձաւ դուբլի հեղինակ՝ հեռու տարածութիւնից խփելով իր երկրորդ կողը: Դարձեալ սխալուեց Կարիուսը, որը չկարողացաւ հետ մղել գնդակը:

Ռոնալդուն դարձաւ պատմութեան մէջ առաջին ֆուտպոլիստը, որը 5-րդ անգամ նուաճեց Ախոյեանների լիգայի գաւաթը:

Սալահ. Վստահ եմ, որ կը Մեկնեն Ռուսաստան, Որպեսզի Դուք Հայարտանաք Ինձնով

Անգլիական «Լիւերպոլի» եւ Եգիպտոսի հաւաքական լաւագոյն ռմբարկու Մոհամեդ Սալահը մտադիր է մասնակցել Յունիսի 14-ին Ռուսաստանում մեկնարկելիք աշխարհի առաջնութեանը:



«Շատ ծանր գիշեր էր, բայց ես մարտիկ եմ: Չնայած բոլոր դժուարութիւններին, ես վստահ եմ, որ կը մեկնեմ Ռուսաստան, որպեսզի դուք հպարտանաք ինձնով: Ձեր սէրն ու աջակցութիւնը ուժ են տալիս ինձ», - թուրքերէցի ինտերվիւիէի ժամանակ Սալահը:

Յիշեցնենք, որ Սալահը փոխարինվել էր Ախոյեանների լիգայի եզրափակիչի առաջին խաղակէստում Մադրիդի «Ռեալի» իպանացի պաշտպան, թիմի ավագ Սերխիո Ռամոսի հետ կոշտ բախման հետեւանքով:

Պրագիլացիները ԱԱ-ում Յաղթելու Դէպքում Ռեկորդային Պարգևավճար Կը Ստանան

Պրագիլացի ֆուտպոլի կոնֆեդերացիան ռեկորդային պարգևավճար է խոստացել հաւաքականի ֆուտպոլիստներին, եթէ նրանք յաղթեն ԱԱ-2018-ում:

Մոնդիալում յաջողութեան հասնելու դէպքում Պրագիլացի հաւաքականի ֆուտպոլիստներն ու մարզչական շտաբի անդամները կը ստանան մէկկական միլիոն տոլար պարգևավճար:

ԱԱ-2018-ի խմբային փուլում Տիտէի գլխաւորած ընտրանու մրցակիցները կը լինեն Շուէցարիան, Կոստա Ռիկան եւ Սերպիան:

Յիշեցնենք, որ աշխարհի առաջնութեան եզրափակիչ մրցաշարը կ'անցկացվի Յունիսի 14-ից Յունիսի 15-ը Ռուսաստանի 11 քաղաքներում:



Հայաստանում Ստեղծուել է Նոր Ֆուտպոլային Ակումբ

Հայաստանում ստեղծուել են 2 նոր ֆուտպոլային ակումբներ՝ «Յունիորը» եւ «Լոկոմոտիվը» (Երեւան), որոնք յաջորդ մրցաշրջանում ամենայն հաւանականութեամբ կը խաղան Առաջին խմբում:

Երկու թիմերը ստուգողական հանդիպում են անցկացրել: «Լոկոմոտիվը», որը գլխաւորում է «Բանանց-2»-ի նախկին մարզիչ Վահէ Գեւորգեանը, յաղթել է նուազագույն հաշուով:

Ռուսական «Յունիորի» մամուլի ծառայութիւնը մանրամասներ է ներկայացրել Հայաստանում բացուած ակումբի վերաբերեալ:

Երեւանում կայացած «Յունիորի» առաջին սեփական հաւաքին մասնակցել է 18 պոտենցիալ նորեկ (Հայաստանից, Ռուսաստանից եւ Բրազիլիայից): Հաւաքը ղեկավարում է եւ թիմը առաջիկայում կը գլխաւորի Սերգէյ Գերասիմեցը:

«Կը պատմենք այն մասին, թէ ինչու է ընտրուել հենց Հայաստանի առաջնութիւնը:

- Սա եւրագաւաթներ տանող ամենակարճ ճանապարհն է: Անցած մրցաշրջանում Բարձրագույն խմբի առաջնութեանը մասնակցում էր 6 թիմ, որոնցից 4 կը խաղան Եւրոպայում:

- Տեղի ֆեդերացիայի օգնութիւնը: Մենք մէկ անգամ չէ, որ հանդիպել ենք Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիայի ղեկավարներին: Բացի բանաւոր խօսքից, նրանք մեզ անհատուց կը տրամադրեն Սեւանի նորակառուց ստադիոնը: Կը փոխանցեն մեզ նաեւ տեղի ակադեմիան, որտեղ մենք կը հաւաքենք մեր լաւագոյն սաներին եւ մարզիչներին:

- Բացակայում է լեգէոներների սահմանափակումը: Մենք կարող ենք հրաւիրուել մեզ անհրաժեշտ բոլոր խաղացողներին, որոնք խաղացել են մեր ակումբում, ինչպէս նաեւ «Յունիորի» արտասահմանցի միւս սաներին:

- Եղանակային պայմանները, սննդի որակը, բնակարանների գները, սրանք բոլորը ցոյց են տալիս, որ Հայաստանը օպտիմալ տարբերակ է ակումբի համար», - ասված է «Յունիորի» յայտարարութիւնում:

Մարգարիտա Գասպարեանը Եզրափակիչում է

Ռուսաստանի թենիսիստուհի Մարգարիտա Գասպարեանը դուրս է եկել Սպանիայի Լեա Ֆրանկեսես Դել Վալլես քաղաքում ընթացող ITF շարքի մրցաշարի եզրափակիչ:



Կիսաեզրափակիչում 23-ամեայ մոսկուհայ մարզուհու մրցակից, բրիտանացի Քեթի Ստոնը 1:6, 0:2 հաշուով ժամանակ հրաժարուել է պայքարից:

Տիտղոսի համար Մարգարիտա Գասպարեանը կը հանդիպի սպանացի Պաոլա Բադոս-Նիբերտի հետ:

WTA դասակարգման աղիւսակում Գասպարեանը գրադեցնում է 649-րդ տեղը: 2016թ. Փետրարին նա 41-րդ տեղում էր, սակայն ծնկահանդի վիրահատութիւններից յետոյ տեւական ժամանակ բաց թողեց եւ վերադարձաւ կորտ 2017թ. աշնանը:

ԱՄՆ-ի, Մեքսիկայի ու Գանատայի ֆուտպոլային Ներկայացուցիչները Ժամանել են Հայաստան

Հայաստան են ժամանել «Գանատա-Մեքսիկա-ԱՄՆ-2026» ֆուտպոլի աշխարհի առաջնութեան յայտներկայացրած երկրներից կազմուած պաշտօնական պատուիրակութիւններից մէկը՝ Գանատայի ֆուտպոլի ֆեդերացիայի նախագահ Սթիւ Ռիդի գլխաւորութեամբ: Նրան ուղեկցում էին ԱՄՆ-ի ֆուտպոլի ֆեդերացիայի ադմինիստրատիւ տնօրէն Բրայան Ռեմեդիոն, Կանադայի ֆուտպոլի ֆեդերացիայի մարքեթինգի բաժնի ղեկավար Սանդրա Գեյլը եւ Մեքսիկայի ֆուտպոլի ֆեդերացիայի գործադիր տնօրէնի տեղակալ Ինիգո Ռիեստրան, յայտնում է ՀՅՖ կայքը:



ՀՅՖ ղեկավարութեան հետ հանդիպման ընթացքում Սթիւ Ռիդը եւ իր գործընկերները ներկայացրել են հիւսիսամերիկեան երկրների միասնական յայտի կարեւորագույն կէտերը, տուեալ միջոցառման անցկացման իրենց տեսլականը եւ պատկերացումները:

ՀՅՖ նախագահ Ռուբէն Հայրապետեանը բարձր է գնահատել մտայնացումները, նորարարութիւնները եւ համաշխարհային ֆուտպոլային ընտանիքի բոլոր անդամների համար ահնկալուելիք արդիւնքները, որոնք դրուած են յայտի հիմքում:

ՀՅՖ նախագահը հիւրերին ծանօթացրել է Աւանի ֆուտպոլի ակադեմիայի պայմաններին եւ ենթակառուցուածքներին: Սթիւ Ռիդը եւ միւս հիւրերը շատ բարձր են գնահատել ենթակառուցուածքների մակարդակը եւ վստահութիւն յայտնել, որ այդպիսի ենթակառուցուածքները պարտաւոր են երկրաժամկէտ կտրուածքով լուրջ արդիւնքներ բերել:

Հանդիպման վերջում կողմերը պայմանաւորուածութիւններ են ձեռք բերել յետագայ հանդիպումների արդիւնքում առաւել խորը համագործակցութեան շուրջ քննարկումներ իրականացնելու համար:

Թաւշեայ Յեղափոխութեան Օրերին

Շարունակուած էջ 6-էն

սի հրահանգ չէր կարող իջեցնել խաղաղապահ զօրքերի հրամանատարին: Այնպէս որ, էստեղ երկու կարծիք լինել ի կարող:» ՊՆ նախկին փոխնախարարը նաեւ կարծում է, որ զինուած ուժերի կիրառման մասին փոփոխուած սահմանադրական նորմը պէտք է վերանայի:

«Եթէ նախկին Սահմանադրութեամբ յստակ արգելուած էր բանակի ներգրաւուումը արտակարգ դրութեան ժամանակ, նոր Սահմանադրութեամբ այդ հնարավորութիւնը տրուած է: Նախկինում բանակը կարող էր օգտագործուել միայն ռազմական դրութեան ժամանակ: Կարծում եմ՝ սահմանադրական այդ նորմը վերանայելու շատ լուրջ խնդիր կայ», - շեշտեց Քոչարեանը: Ինչ վերաբերում է խաղաղապահ բրիգադի հրամանատար Վաղինակ Սարգսեանի հրա-

ժարականն ընդունել-չընդունելու հարցին, ՊՆ խոսնակն այդ առթիւ պատասխանել է.

«Պաշտոնից ազատուելու դիմումի ներկայացման շարժառիթները առաջարկում եմ պարզել զնդապետ Վ. Սարգսեանից: Միեւնոյն ժամանակ տեղեկացնում եմ, որ բարձրագոյն հրամանատարական կազմի պաշտօնների նշանակումն իրականացուած է ՀՀ Սահմանադրութեան 133-րդ յօդուածի 1-ին մասի պահանջներին համաձայն՝ Հայաստանի Հանրապետութեան նախագահի կողմից՝ ՀՀ վարչապետի առաջարկութեամբ»:

Յ.Գ. Արդեօք պաշտօնաթող նախարար Վիգէն Սարգսեանը պատրաստ է պատասխան տալ, թէ ի՞նչ նպատակով եւ ո՞ւմ հրահանգով էր ուստիկանութեան մայրերին նման վարժանքների ուղարկել խաղաղապահ բրիգադ, ինչն էլ կարող էր սարքոտաժի պատճառ դառնալ:

ՀԱՅՈՒՆ «ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՏՐԱՍՊԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ»

Շարունակուած էջ 14-էն

հայու հաւատքը», դարձեալ կ'ըսէ Մայիսը: Հաւատքը՝ հայկական կեանքին ու հայրենի պետականութեան եւ երկրին, ուր հայուն կեանքը պիտի կերտուի ու շարունակուի, բառացիօրէն եւ փոխաբերաբար: Հայու կեանքին արգասիքը՝ հայուն տունը, պետականութիւնը ստեղծելու, ինչպէս նաեւ զայն պահելու ու կեանքի շարժումին իմա՝ յառաջխաղացքին մէջ ճիշդ հունին մէջ դնելու ճշմարտութիւնն է: Հարիւր տարիներու վրայ երկարող հայուն պատմութեան տրամաբանութիւնը ասոր մէջ է ու ասոր համար է: Այս տրամաբանութեամբ է, որ հայը պէտք է շարունակէ ապրիլ: Եւ այս տրամաբանութեան խորքը հայուն «ապահովութիւն»-ն է, որուն հայը պէտք է շարունակէ հաւատալ: Այս ապահովութեան ընդմէջէն է, որ հայը պիտի շարունակէ ապրիլ ֆիզիքապէս ու տակաւին իր հոգեմտաւոր աւանդին մէջ մնալ: Այս ապահովութիւնը կրնայ գալ միաս-

նական ջանքով ու հաւաքական միտքով՝ հայրենի պետականութիւն եւ ժողովուրդին ու սփիւռքին միջեւ: Եւ ան անպայմանօրէն պէտք է իրականանայ «Թաւշեայ» միջոցառումով եւ կեցուածքով:

Հայուն պատմութեան տրամաբանութիւնը հայուն տունը կերտելու եւ զայն ապահով պահելու իրականութեան մէջ է: Հոն է, որ հայը պիտի շարունակէ իր գոյութիւնը՝ որպէս հայ եւ հայկական պետականութիւն:

Հայուն պատմութեան տրամաբանութիւնը իր ազգային ինքնութեան համար հարազատ կեանք մը կերտելուն մէջ է:

Մայիս 1918-ի Հայաստանի Ա. Հանրապետութիւնը կերտուած է նոյնինքն այս հայուն պատմութեան տրամաբանութեամբ: Հանրապետութիւն մը, ուր հայը սկսաւ ապրիլ իր կեանքը՝ կատարեալ հարազատութեամբ եւ որ մինչեւ օրս կը շարունակուի, ու տակաւին պէտք է շարունակուի:

Հայուն պատմութեան տրամաբանութիւնը:

ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԸ

Շարունակուած էջ 15-էն

ցէն դուրս եկաւ, նմանապէս անոր ընկերները, վստահաբար լաւատեղեակ են այս բոլորին եւ դեռ աւելիին, իսկ մենք այս տողերով բնա՛ւ մտադիր չենք, ո՛չ ալ իրաւունք կամ կարողութիւն ունինք այդ սեւ օրերը ապրած, սակաւապետներու դառն ու դաժան ճնշումներուն ընդդիմացած եւ բանտերը ճաշակած ղեկավարներուն դաս տալ. այս տողերը պարզապէս մտորումներ են եւ բարձրաձայն մտածումներ՝ սրտցաւ հայրենակիցի մը կողմէ:

Մեզի հարկաւոր է ազգասիրութեամբ եւ հայրենասիրութեամբ լո՛ւրջ աշխատանքի լծուիլ: Անձնուրաց, զոհողութիւն պահանջող աշխատանք է պէտք, առանց անձնական շահեր կամ հարստութիւններ դիզելու մտադրութեամբ: Իսկ քաղաքական հողի վրայ, Հայաստանի մէջ տեղի ունեցած ժողովրդային այս անցուդարձերուն տանք իրենց իսկական եւ հարազատ անունը... Յեղափոխութեան գոյն չտանք (Թաւշեայ թէ՛ն ալ), որովհետեւ վատահամբաւ գունաւոր փոփոխութիւնները վերջապէս կրնան սեւ ըլլալ եւ երկիրը քայքայել, ինչպէս եղաւ Ուրբանիոյ, Վրաստանի եւ Իրաքի պարագաները: Մերը, պարզապէ՛ս, օլիգարխներու փտած կարգերու փոփոխութիւն էր՝ ժողովրդական շարժումով եւ ուժերով, խիզախ ու նուիրուած մարդոց առաջնորդութեամբ:

Բայց եւ այնպէս, չմոռնանք, որ Ռուսիան, մեր վաղեմի «մեծ եղբայր»ը, կը փափաքի Հայաստա-

նը մի՛շտ իր շուքին տակ պահել: Անիկա, առանց Հայաստանի, կը կորսնցնէ իր հակակշիռը կողկասի մէջ: Սակայն, մենք եւս սուր կարիքը ունինք Ռուսիոյ նման հօր դաշնակիցի մը: Անիկա զինուորական խարխիս ունի Գիւմրիի մէջ, մեր դարաւոր թշնամիին՝ Թուրքիոյ սահմանին վրայ, ինչ որ մեզի համար ապահովութեան յոյս է: Այնուամենայնիւ, արեւմտեան երկիրներու համար շատ կարեւոր է Ռուսիան կողկասէն հեռու պահելը, իսկ Հայաստանի խաղաթուղթը ծանրակշիռ է անոնց համար: Մենք անոնց բարեկամութեան ալ կարիքը ունինք. ուրեմն՝ հարկ է զգուշութեամբ խաղալ քաղաքականութեան անգութ լարերուն վրայ եւ խուսափիլ կոռուպիւնտը ըլլալէ, ինչպէս եղան Սուրիան եւ այլ երկիրներ:

Յաղթանակին հասնիլը շատ դժուար է ու կարեւոր, բայց յաղթանակը պահելը՝ ա՛լ աւելի բարդ ու հիմնական: Եթէ յաջողինք պէտք եղած աշխատանքը տանիլ, ա՛յն ժամանակ պիտի կարենանք զարգացած եւ ինքնաբաւ երկիրներու շարքին դասուիլ՝ օտար երկիրներու նուազ ազդեցութեան տակ: Իսկ եթէ չյաջողինք այդ ընել, ապա պիտի անցնինք յետամնաց, տկար, աղքատ, անյուսալի վիճակ ունեցող երկիրներու շարքին, եւ մեր ձեռքերը պիտի միշտ երկարենք նոր թրամփներու, որպէսզի մեզի քանի մը միլիոն տոլար օգնութիւն տան՝ գոյատեւելու համար:

Մնանք յոյսով եւ աշխատինք կերտելու մեր փայլուն ապագան: hampomg@yahoo.com

HARRY THE HANDYMAN SERVICES
Air Conditioning Repair
Plumbing & Roofing
Water & Gas Pipes • Fencing & Painting
Iron Work Repair • Electrical Job
 Email: haroutig007@gmail.com
Dependable • Reliable • Fast Work
CALL HARRY
818•219•3314

Ինքնաշարժ Վարելու Դասընթացքներ
Բացառիկ հմուտ և փորձառու
վարորդ-հրահանգիչ
Ծորճ Օհանեան-ի կողմից
George Ohanian Driving & Traffic Instructor
 Tell:(818) 434-6407
 Email:geohanian@gmail.com
 Website:georgedriving.com

AUTO BODY MAN
 Ինքնաշարժի նորոգութեան ընկերութիւն մը կարիքը ունի տասը տարուան փորձառութիւն ունեցող Body Man-ի մը West Los Angelosի մէջ:
 Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել Սթիվին (949) 394-7757 թիւին:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 125,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: _____
 Address: _____
 City: _____ State: _____ Zip Code: _____
 Country: _____
 Tel: _____ Email: _____

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net



ARMENIAN COUNCIL OF AMERICA

Political Action Committee Endorsements

ON TUESDAY, JUNE 5 VOTE FOR

CALIFORNIA GOVERNOR



Antonio Villaraigosa



Ed Hernandez Lieutenant Governor
 Alex Padilla Secretary of State
 Betty Yee State Controller
 Fiona Ma State Treasurer
 Ricardo Lara Insurance Commissioner



Scott Svonkin Board of Equalization
 Xavier Bacerra Attorney General
 Tony Thurmond Superintendent of Public Instruction

UNITED STATES SENATE



Kevin de León

UNITED STATES HOUSE OF REPRESENTATIVES



Jeff Denham CA - CD 10
 Jackie Speier CA - CD 14
 Jim Costa CA - CD 16
 Anna Eshoo CA - CD 18
 David Valadao CA - CD 21
 Judy Chu CA - CD 27
 Adam Schiff CA - CD 28
 Tony Cardenas CA - CD 29



Brad Sherman CA - CD 30
 Grace Napolitano CA - CD 32
 Ted Lieu CA - CD 33
 Jimmy Gomez CA - CD 34
 Karen Bass CA - CD 37
 Linda Sanchez CA - CD 38
 Lucille Roybal-Allard CA - CD 40
 Alan Lowenthal CA - CD 47

CALIFORNIA STATE ASSEMBLY



Mark Levine AD 10
 Chris Holden AD 41
 Laura Friedman AD 43
 Adrin Nazarian AD 46



Luz Rivas AD 39



Ed Chau AD 49
 Richard Bloom AD 50
 Miguel Santiago AD 53
 Ian C. Calderon AD 57



Anthony Rendon AD 63
 Mike A. Gipson AD 64

MEMBER OF THE STATE ASSEMBLY

ASSEMBLY - FULL TERM

39th District Full Term Vote for One	PATREA PATRICK Documentary Producer/Author Party Preference: Democratic	165	<input type="radio"/>
	RICARDO ANTONIO BENITEZ Business Owner Party Preference: Republican	166	<input type="radio"/>
	PATTY LOPEZ Community Volunteer Party Preference: Democratic	167	<input type="radio"/>
	ANTONIO SANCHEZ Workforce Development Director Party Preference: Democratic	168	<input type="radio"/>
	BONNIE CORWIN Manager/Bookkeeper Party Preference: Democratic	169	<input type="radio"/>
	LUZ MARIA RIVAS Science Educator/Commissioner Party Preference: Democratic	170	<input checked="" type="radio"/>

ASSEMBLY SPECIAL GENERAL ELECTION - SHORT TERM

(Write-in votes are not authorized for voter-nominated offices at the General Election.)

39th District Unexpired term ending December 3, 2018 Vote for One	LUZ MARIA RIVAS Science Educator/Commissioner Party Preference: Democratic	173	<input checked="" type="radio"/>
	RICARDO ANTONIO BENITEZ Contractor/Business Owner Party Preference: Republican	174	<input type="radio"/>



Jesse Gabriel AD 45

MEMBER OF THE STATE ASSEMBLY

ASSEMBLY - FULL TERM

45th District Full Term Vote for One	JEFF BORNSTEIN Small Business Owner Party Preference: Democratic	158	<input type="radio"/>
	RAY BRIDGEP Small Business Owner Party Preference: Democratic	159	<input type="radio"/>
	DANIEL BIRN Small Business Owner Party Preference: Democratic	160	<input type="radio"/>
	JESSE GABRIEL Constitutional Rights Attorney Party Preference: Democratic	161	<input checked="" type="radio"/>
	NEELKE MOEDING M.A.S.S.I.C. Party Preference: Democratic	162	<input type="radio"/>
	ANGEL PACHEL School Community Coordinator Party Preference: Democratic	163	<input type="radio"/>
	JUSTIN M. CLARK Party Preference: Republican	164	<input type="radio"/>

ASSEMBLY SPECIAL GENERAL ELECTION - SHORT TERM

(Write-in votes are not authorized for voter-nominated offices at the General Election.)

45th District Unexpired term ending December 3, 2018 Vote for One	JUSTIN M. CLARK Party Preference: Republican	167	<input type="radio"/>
	JESSE GABRIEL Constitutional Rights Attorney Party Preference: Democratic	168	<input checked="" type="radio"/>

LOS ANGELES COUNTY



Hilda Solis for County Supervisor District 1
 Sheila Kuehl for County Supervisor District 3
 Jeff Prang for L.A. County Assessor



Paid for by the Armenian Council of America-PAC
 1060 N. Allen Ave Suite 210
 Pasadena, CA 91104